

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

«Խոշոր Սուտը» Որ Կը Սպառնայ Ամերիկայի Ժողովրդավարութեան

Ամերիկայի նախագահական ընտրութիւններէն անցած են եօթ ամիսներ ու նորընտիր նախագահի երդման արարողութենէն չորս ամիսներ ետք, նախկին նախագահ Տաւրիս Թրամփ կը մերժէ ընդունիլ իր պարտութիւնը եւ կը շարունակէ յամառիլ որ նախագահական ընտրութիւնները կեղծուած են ու պաշտօնը խլուած է իրմէ:

Ամերիկեան մամուլը եւ քաղաքական շրջանակները նախկին նախագահի այս պնդումները իրաւացիօրէն կոչեցին՝ «խոշոր սուտ», որու հեղինակները մեծ վնաս կը հասցնեն երկրի ժողովրդավարական հաստատութիւններուն ու կը խախտեն ընտրական գործընթացներու նկատմամբ հասարակութեան վստահութիւնը:

«Խոշոր սուտին» եւ դատարար պաշտական այլ տեսութիւններուն հաւատացողները անցեալ Յունուար 6-ին, ներխուժելով պետութեան խորհրդանիշ հանդիսացող Քալիթի շէնքէն ներս կարողացան ժամանակաւոր խափանել Ծերակոյտի եւ Ներկայացուցիչներու Տան համատեղ նիստը, որ նուիրուած էր քուէարկութեան արդիւնքներու վերջնական հաստատման եւ ճօՊայտրի որպէս նորընտիր նախագահի հռչակման: Այդ քուէականը դարձաւ Միացեալ Նահանգներու պատմութեան ամենէն նշանակալից օրերէն մէկը, սեւ բիծ մը դրոշմելով Ամերիկայի հեղինակութեան վրայ:

Սպիտակ Տունէն հեռանալէն ետք նախկին նախագահը այժմ սկսած է քուէարկութեան արդիւնքներու անպաշտօն ստուգման գործընթաց ծաւալելու աշխատանքին, օգտագործելով նահանգային խորհրդարաններու մէջ իրեն համակիր օրէնսդիրներ, որոնք իրենց կարգին կը նպաստեն «խոշոր սուտի» տարածման:

Արիզոնա նահանգի Ծերակոյտը, ուր Հանրապետականները կը կազմեն մեծամասնութիւն, ենթարկուելով Թրամփի կողմնակիցներու ճնշումներուն, պահանջեց իրեն յանձնել Մարիքոփա գաւառի ակտի քան երկու միլիոն ընտրողներու քուէաթերթիկները եւ էլեկտրոնային սարքերը: Ապա, Ծերակոյտի նախագահը ստուգման համար այդ բոլորը փոխանցեց երրորդ կողմի ընկերութեան մը, որու ղեկավարները եղած են «խոշոր սուտի» տարածողներ:

Ներկայիս, փորձ կը կատարուի նոյնանման գործընթացը սկսիլ այլ նահանգներու մէջ եւս, ուր Թրամփ պարտութիւն կրած էր: Գործնական առումով այս ստուգումները ոչինչ կը փոխեն իրականութենէն, որ ճօՊայ-

Սահմանային Իրավիճակը Կը Մնայ Անփոփոխ Հայաստան Եւ Ատրպէյճան Կը Պատրաստուին Քննարկել Սահմանագծման Հարցերը

Հայաստանի վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեան հաստատեց մամուլի մէջ երեւցած այն տեղեկութիւնները, որոնց համաձայն Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ պիտի ստորագրուի նոր փաստաթուղթ՝ սահմանագծման եւ սահմանազատման հարցերը ճշգրտութեամբ, որոնք հրատապ դարձան ատրպէյճանցի բանակայիններու կողմէ վերջին օրերուն Հայաստանի տարածքներ մուտք գործելէն ետք:

«Այն լուծումները, որոնք այս պահին մեր միջազգային գործընկերների հետ ձեռք են բերուած նախնական համաձայնութիւններ, այդ լուծումները 100 տոկոսով համապատասխանում են Հայաստանի շահերին, 100 տոկոսով, ոչ թէ 99,9: Եւ, այո, եթէ Ատրպէյճանը այդ պայմանաւորուածութիւնները իրագործի, եւ այն պայմաններում, ինչ որ խօսել ենք, այո, եւ այդ թուղթը ստորագրելու եմ», - յայտարարած է Փաշինեան:

Ատրպէյճանական ուժերը դեռ կը գտնուին Հայաստանի տարածքը, Մայիս 12-էն ի վեր Հայաստանի սահմաններուն վրայ ստեղծուած իրավիճակին մէջ փոփոխութիւն չկայ, իրադրութիւնը կը



Սեւ Լիճի շրջանը, ուր յառաջացած են Ատրպէյճանցի զինուորները

շարունակուի մնալ լարուած, կառավարութեան նիստին յայտարարեց վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեան:

«Քաղաքական առումով մեր խնդիրը հետեւեալն է, առաջինը, թոյլ չտալ, որ իրավիճակը դուրս գայ վերահսկողութիւնից, այսինքն՝ առաւելագոյնը անել պատերազմական կամ ռազմական բախման որեւէ սենար բացառելու համար, եւ

երկրորդը՝ հասնել նրան, որ ատրպէյճանական զինուժի ներկայացուցիչները լքեն Հայաստանի Հանրապետութեան տարածքը: Այս առումով կարող ենք արձանագրել, որ առեւթի դիւանագիտական աշխատանք է արուել եւ արւում: Այս պահի դրութեամբ դիւանագիտական կատարուած աշխատանքը հա-

Շար.ը էջ 5

Վախճանած Է Հայ Կաթողիկէ Պատրիարք Գրիգոր Եպիսկոպոս Կապրոյեանը

Պէյքրուքի մէջ Մայիս 25-ի առաւօտեան կեանքէն հեռացած է Հայ կաթողիկէ պատրիարք Տէր Գրիգոր Եպիսկոպոս Կապրոյեանը:

Գրիգոր Եպիսկոպոս Կապրոյեան Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց կաթողիկոս-պատրիարք դարձած է 2015-ի Յուլիս 25-ին՝ փոխարինելով երջանակիչատակ Ներսէս Պետրոս 19-րդ Թարմունիին:

Գրիգոր Կապրոյեան ծնած է 1934-ի Նոյեմբեր 15-ին Սուրիոյ Հալէպ քաղաքը: Ընտանիքը վերջնականապէս հաստատուած է Լիբանան 1938-ին:

Իր նախնական ուսումը կատարած է Ֆուռն-Շուպպաքի Ֆրէրներու Նոթր-Տամ դպրոցին մէջ:

Կը մտնէ Զմմառու Պատրիարքական կրթի միաբանութեան փոքր ընծայարանը, Զմմառ. ապա ճուռի, ու կը յաճախէ Մարիսը Ֆրէրներու վարժարանը:

Պաքալորեան առնելէ ետք՝ կ'ուղարկուի Քահանայապետական Լեւոնեան Հայ վարժարանը, Հոռոմ, ուր կը յաճախէ վեց տարի Քահանայապետական Գրիգորեան (կրէկորիան) համալսարանը, ստանալով սքոլասթիք փիլիսոփայութեան պաքալորեան եւ աստուածաբանութեան լիսանսի վկայականը:

Կը վերադառնայ Լիբանան, ուր կը ձեռնադրուի Զմմառու մի-



Գրիգոր Եպիսկոպոս Կապրոյեան Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց կաթողիկոս-պատրիարք

աբան կուսակրօն վարդապետ 1959-ի Մարտ 28-ին, ձեռամբ Վսեմաշուք Կարդինալ Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեան, Կաթողիկոս Պատրիարքի, որ նախագահն էր ժողովուրդներու Աւետարանացման Համաժողովին:

Յետ մէկ տարի պաշտօնավարելու ճունի մէջ, որպէս փոխտեսուչ փոքր ընծայարանի, կ'ան-

Շար.ը էջ 14

Եւրոպական Խորհրդարանը Կոչ Ըրած Է Թուրքիոյ Ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը

Եւրոպական խորհրդարանը ընդունած է բանաձեւ՝ կոչ ընելով Թուրքիոյ ճանչնալ Հայոց ցեղասպանութիւնը, ինչ որ ճանապարհ կը հարթէ հայ եւ թուրք ժողովուրդներու հաշտեցման համար: Եւրոպական խորհրդարանի պատգամաւորները մտահոգութիւն յայտնած են Թուրքիոյ թշնամական արտաքին քաղաքականութեան կապակցութեամբ՝ մասնաւորապէս Յունաստանի եւ Կիպրոսի նկատմամբ, ինչպէս նաեւ Սուրիոյ, Լիպիոյ, Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան մէջ Թուրքիոյ մասնակցութեան առնչութեամբ:

Խորհրդատուական բնոյթ ունեցող բանաձեւը Եւրոպական խորհրդարանի կողմէ ընդունուած է Մայիս 19-ին: Կողմ քուէարկած է 480 պատգամաւոր, դէմ՝ 64-ը, 150-ը ձեռնպահ մնացած է:

Եւրոպայի ամենամեծ քաղաքական ուժը՝ Եւրոպական ժողովրդական կուսակցութիւնը թուրքերով գրած է, թէ Թուրքիոյ հարցով ընդունուած է ամենակոշտ բանա-

Շար.ը էջ 14

Շար.ը էջ 5

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Պատի՞ւ Ունենմ, Թե՞ Թալան

ՄԱՐԻՆԵ ԽԱՌԱՏԵԱՍ

ԱԱԾ-ում յարուցուած քրէական գործով շուրջ կէս մլրդ դրամի յափշտակութեան մէջ մեղադրուող ՀՀ 3-րդ նախագահ Սերժ Սարգսեանի հետ նախընտրական դաշինք կազմած ԱԱԾ նախկին պետ Արթուր Վանեցեանը ոչ վաղ անցեալում հպարտանում էր պետական ունեցուածքի թալանի բացայայտումներով:

Ընդ որում՝ իր բացայայտած թալանի հեղինակները հիմնականում հենց այն մարդիկ են, ում հետ այսօր դաշինք է կազմել Վանեցեանը: Նրա պաշտօնավարման օրօք ԱԱԾ-ն շարաշահման սկանդալային բացայայտումներ է արել Սերժ Սարգսեանի եղբոր՝ Մաշիկ Սարգսեանի եւ նրա որդու՝ Նարեկ Սարգսեանի, փեսայի՝ Միքայէլ Մինասեանի եւ այլ մերձակերների հետ:

Ինքն իրեն կոռուպցիայի դէմ պայքարի առաջամարտիկ համարող դաշինք է կազմել կոռուպցիայի դէմ պայքարը «հասարակութեանը սեւերի եւ սպիտակների բաժանում» անուանող ուժի հետ:

Ինչպէս յայտնի է՝ «Պատիւ ունենմ» դաշինքի 2-րդ համարը Երեւանի նախկին քաղաքապետ Տարոն Մարգարեանն է: Ընդամէնը 3 տարի առաջ ԱԱԾ նախկին պետ Վանեցեանը բացայայտել էր Երեւանի նախկին քաղաքապետ Տարոն Մարգարեանի առնչութիւնը «Երեւան» հիմնադրամում յայտնաբերուած 1,8 մլրդ դրամի շարաշահումներին: Յիշեցնենք, որ Տարոն Մարգարեանն այդ հիմնադրամի նախագահն էր:

ԱԱԾ-ն Երեւանի քաղաքապետարանի «Երեւան» հիմնադրամում անցկացրած խուզարկութիւնների արդիւնքում պաշտօնեական լիազօրութիւնների շարաշահման եւ պաշտօնական դիրքն օգտագործելով խարդախութիւն կատարելու յօդուածների յատկանիշներով քրէական գործ էր յարուցել ու մեղադրանք առաջադրել հիմնադրամի տնօրէն Աշոտ Ղազարեանին եւ Դաւիթաշէնի թաղապետի տեղակալ Խաչատուր Կարապետեանին:

Ընդ որում՝ բացայայտումից անմիջապէս յետոյ «Երեւան» հիմնադրամից թալանուած գումարի 1 մլրդ դրամը վերադարձվել էր պիւտճէ, իսկ մնացած 810 մլն դրամը պէտք է յետոյ վճարուէր:

Յիշեցնենք, որ ԱԱԾ աշխատակիցները յատուկ գործողութիւններ էին իրականացրել Երեւանի քաղաքապետարանի շէնքում տեղակայուած հիմնադրամում, որի հոգաբարձուների խորհրդի նախագահ Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարեանն էր: ԱԱԾ աշխատակիցները Երեւանի քաղաքապետարանի շէնքից դուրս էին բերել փաստաթղթերով լի մի քանի սեւ տոպրակ, որոնք տեղափոխել են բեռնատար մեքենայով:

Դրանից յետոյ յայտնի դարձաւ, որ ձեռքակալուել են «Երեւան» հիմնադրամի տնօրէն Աշոտ Ղազարեանն ու Դաւիթաշէն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Խաչատուր Կիրակոսեանը:

Այդ ժամանակ Վանեցեանը տեղեկացրեց, որ Տարոն Մարգարեանի նկատմամբ կայ յարուցուած

եւս մէկ քրէական գործ, որը վերաբերում էր նրա ունեցուածքին: «Եթէ պարզուի, որ այդ ունեցուածքը ձեռք է բերուել ապօրինի ճանապարհով, հաւատացէք, նա պատասխանատուութիւն կը կրի, իսկ ինչ վերաբերում է «Երեւան» հիմնադրամին» առնչուող քրէական գործին, ապա գումարները վճարելուց յետոյ Տարոն Մարգարեանը կ'ազատուի պատասխանատուութիւնից»,- ասել էր Վանեցեանը:

Յեղափոխութիւնից յետոյ յարուցուած քրգործով պետական պաշտօնեայ Տարոն Մարգարեանի 10 մլն տոլարի հասնող ունեցուածի հետ կապուած բացայայտումներ Վանեցեանն այդպէս էլ չարեց: «Հայ Ազգային Կոնգրես»-ը, գումարելով Տարոն Մարգարեանի գոյքն ու փողերը, մօտ 10 միլիոն տոլար էր գնահատել քաղաքապետի կարողութիւնը եւ 2013 թուականին դատախազութիւն էր դիմել՝ պարզելու, թէ ինչպէս է ողջ կեանքում միայն պետական պաշտօններ զբաղեցրած երիտասարդ քաղաքապետը նման կարողութիւն դիզել: Դատախազութիւնն այդ ժամանակ մերժել էր քրէական գործ յարուցել Մարգարեանի դէմ՝ ապացուցուած չհամարելով պնդումը, որ այդ կարողութիւնը ձեռք է բերուել ապօրինի ճանապարհով:

Վանեցեանի խոստացած շատ բացայայտումներ անկատար մնացին: Յիշեցնենք, որ Արթուր Վանեցեանի ԱԱԾ տնօրէն եղած ժամանակ գաղտնալու էն նրա, վարչապետի եւ ՀԲԾ պետի հեռախօսազրուցը, ԱԱԾ-ից անհետացել են խիտ գաղտնի փաստաթղթեր, Հայաստանից փախել են խոշոր ֆինանսական շարաշահումների եւ Մարտի 1-ի գործով մեղադրող

նախկին պաշտօնեաներ: «Պատիւ ունենմ» նախընտրական դաշինքի յուշագրի ստորագրման արարողութեան ժամանակ Հանրապետական կուսակցութեան առաջնորդ Սերժ Սարգսեանը պատասխանել էր «Հայրենիք» կուսակցութեան նախագահ, ԱԱԾ նախկին տնօրէն Արթուր Վանեցեանի հետ համագործակցութեան մասին հնչող հարցերին՝ ասելով. «Երբեմն ես լսում եմ կարծիքներ, թէ Արթուր Վանեցեանը, որպէս ԱԱԾ տնօրէն, հետապնդումների առաջամարտիկ էր, ինչպէս էք նրա հետ դաշինք կազմում: Շատ պարզ: Արթուր Վանեցեանը ժամանակին գիտակցեց նորեւուկ շնագայլերի ողջ էութիւնը, անձամբ կանգ առաւ եւ կոչ արեց նոյնն անել միւսներին: Աւաղ, նրան չլսեցին»:

Իսկ «Պատիւ ունենմ»-ի շտաբի պետ Դաւիթ Յարութիւնեանն էլ լաւելել էր. «Պարոն Վանեցեանը հաւատացել է շրջանառուող կեղծ լուրերին, որոնք իրեն հրամցուած էին, սակայն արագ հասկացել է, որ դրանք ընդդիմախոսներին ճնշելու համար էին»:

Հարց է ծագում, թէ եթէ այդ լուրերը կեղծ էին, ինչպէ՞ս եւ ինչո՞ւ են նախկին իշխանութիւնները պիւտճէ վերադարձրել միլիոնաւոր տոլարներ:

Յիշեցնենք, որ «Պատիւ ունենմ»-ի անդամ, պետական գոյքի կառավարման կոմիտէի նախկին նախագահ Արման Սահակեանի դէմ եւս կայ քրգործ: Դէ իսկ այսօր դատարանում կէս մլրդ դրամի յափշտակութեան մեղադրանքով դատուող Սերժ Սարգսեանի գործը նոյնպէս ԱԱԾ-ն է բացայայտել:

«ՍԻՎԻՔ» կայքէջ

Ատրպէյճանը Սահմանին Եւ Խորը Թիկունքում. Փաստաթղթի Եւ «Գործակալների» Պատմութիւնը

ՀԱՅԿ ԻՍՐԱՅԷԼՅԱՆ

Հայաստանի, Ռուսաստանի եւ Ատրպէյճանի միջեւ նոր եռակողմ փաստաթղթի նախագիծը Հայաստանի հանրութեան համար առաջ է բերում երկու հական հարց: Ընդ որում, բաւականին բարդ է ասել, թէ նրանցից որն է առաջնային: Նախ, փաստաթղթի հրատարակուած նախագիծը պարունակուած է Հայաստանի համար հական վտանգներ, թէ՞ ոչ: Այն, ինչ հրատարակուել է, ակնյայտօրէն վտանգաւոր է: Եւ, եթէ կան վտանգներ, ապա դրանք արդէն այն գործընթացում են, որ սկսուելու է այդ փաստաթղթով, բայց որն անխուսափելի գործընթաց է: Խօսքն, իհարկէ, սահմանազատման եւ սահմանագծման գործընթացի մասին է, որն աշխատանքային խմբերի մակարդակով իրականացնելու մասին է հրատարակուած նախագիծը: Անկասկած է, որ հայ-ատրպէյճանական սահմանագատումն ու սահմանագծումը պէտք է տեղի ունենայ, առնուազն պէտք է սկսուի այդ գործընթացը: Այն կարող է տեւել տարիներ, բայց դա մեխանիզմ է, որը թոյլ կը տայ խուսափել սահմանին իրավիճակի թէժացումից, առնուազն սահմանների համար պայքարի տեսքով: Հետեւաբար, խօսքը գործընթացի մասին է, որն այսպէս, թէ այնպէս պէտք է տեղի ունենայ երկու հարեւան երկրների միջեւ, առաւել եւս, եթէ նրանց միջեւ կայ թշնամութեան եւ լարուածութեան ռեժիմ ու սահմանային հարցերն

այդ ռեժիմում կայծ են, որից կարող է ցանկացած պահի կրակ բորբոքուել: Առնուազն Հայաստանի համար այդ կրակը բացարձակապէս աւելորդ եւ անտեղի է, ըստ այդմ՝ դիւանագիտական-քաղաքական հանգուցալուծման մեխանիզմը կարելի է Հայաստանի համար: Այլ հարց է, թէ Հայաստանն ինչպէս կը բանակցի արդէն սահմանագատման եւ սահմանագծման ընթացքում, ինչպէս կը պաշտպանի իր շահերը, ինչպէս կը պաշտպանի Հայաստանի սահմանը միլիմետր առ միլիմետր: Սա արդէն կախուած է մի շարք գործօններից, առաջին հերթին՝ Հայաստանի իշխանութեան լեգիտիմութիւնից, Հայաստանի կայունութիւնից, տնտեսական եւ անվտանգային ինքնաբաւութեան աստիճանից, դիւերսիֆիկացուած անվտանգային եւ արտաքին քաղաքական մեխանիզմներից: Այսինքն, սա արդէն մի համալիր է, որը չունենալու, չվերականգնելու դէպքում, Հայաստանն այսպէս, թէ այնպէս վտանգի տակ է՝ լինի այդ աշխատանքային գործընթացը, թէ ոչ: Ըստ այդմ, Հայաստանի հանրութիւնը հենց աշխատանքային այդ ընթացքի հանդէպ է, որ պէտք է լինի աշալուղ, զգոն, մի կողմից յստակ պատասխանատուութեան տակ պահի կառավարութեանը՝ ինչպիսին էլ այն լինի ընտրութիւնից յետոյ, եւ միւս կողմից էլ կանգնած լինի կառավարութեան կողքին տարատեսակ մանիպուլյատիւնների կամ տեղեկատուական դիւերսիւնների

միջոցով ամբողջական պաշարը քայքայելու ներքին եւ արտաքին ռիսկերի պարագայում, դարձեալ՝ ինչպիսին էլ լինի կառավարութիւնը:

Միւս առանցքային հարցը, որ կանգնած է Հայաստանի հանրութեան համար, այն է, թէ ինչպէս է տեղի ունենում այդօրինակ աշխատանքային փաստաթղթերի արտահոսքը, երբ այն յայտնուած է տարբեր ընդդիմադիր դիրքաւորում ունեցող շրջանակների ձեռքին եւ դառնում տեղեկատուա-քաղաքական մանիպուլյացիայի առարկայ: Աւելին, վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանը յայտարարում է, թէ Հայաստանում այդպէս վարուած են Ատրպէյճանի տեղեկատուական գործակալները: Նա յայտարարել է, որ Հայաստանի քաղաքական դաշտում կան Ատրպէյճանի տեղեկատուական գործակալներ: Ըստ Փաշինեանի՝ ընթացում է եռակողմ գործընթաց, որի մասնակիցն են Հայաստանը, Ռուսաստանը եւ Ատրպէյճանը: Ըստ նրա՝ Հայաստանի որոշակի շրջանակներ արտահոսքը ստանում են Ատրպէյճանից, ինչի միջոցով ստեղծում են անկայուն իրավիճակ, որն Ատրպէյճանի օգտին է:

Հարց է առաջանում, թէ ո՞վ եւ ինչպէ՞ս պէտք է ապահովի Հայաստանի տեղեկատուական անվտանգութիւնը: Ժամանակակից տեխնոլոգիական միջավայրում հասնել բացարձակ տեղեկատուա-



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆԱՎԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՐԷ ԱՋԱՊԱՂԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August


ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒԿԱՎ ՇԱԲԱԹ

«Պարտութեան Միակ Պատասխանատուն Փաշինեանը Չէ. Ըսած է Տէր Պետրոսեան

Կէս ճշմարտութիւն է այն, որ դարաբաղեան վերջին պատերազմին կրած պարտութեան միակ պատասխանատուն եւ միակ մեղաւորը Նիկոլ Փաշինեանն է: Այսօր՝ Մայիս 24-ին հրապարակուած ծաւալուն յօդուածով նման գնահատական հնչեցուցած է առաջին նախագահ, առաջիկայ ընտրութիւններուն մասնակցութեան մասին յայտարարած Հայ ազգային քոնկրէսի ղեկավար՝ Լեւոն Տէր Պետրոսեան:



ՀԱԿ-ի ղեկավար՝ Լեւոն Տէր Պետրոսեան

այն ժամանակ, երբ հարկադրուած կը լինենք» - իսկ հարկադրուած լուծումը ոչ այլ ինչ է, եթէ ոչ անձնատրութիւն, ինչը նոյնպէս իրականութիւն դարձաւ», - նշած է առաջին նախագահը:

Ապա Տէր Պետրոսեան շարունակած է, որ վազգէն Սարգսեան գիտակցած է այդ թէզի սխալը եւ փորձած զայն ուղղել Կարէն Դեմիրճեանի հետ կնքած դաշինքի միջոցով: Ըստ առաջին նախագահին՝ այդ դաշինքը կրնար դարաբաղեան կարգաւորման գործընթացը վերադարձնել իրատեսական հուն, եթէ չ'ըլլար Հոկտեմբեր 27-ի ոճրագործութիւնը: Առաջին նախագահի խօսքով՝ «վերջապահը եւ իրականացրին վազգէն Սարգսեանի երկու «պատուիրանները»:

Ըստ անոր՝ 1997 թուականէն ի վեր՝ Հայաստանի բոլոր կուսակցութիւնները, բացի ՀՀԾ-էն ընտրուած են փոխզիջումներու մերժման կործանարար ուղեգիծը, ինչ որ յանգեցուցած է այսօրուայ աղէտին: Առաջին նախագահը ընդգծած է, որ պատասխանատուութեան բաժին ունի նաեւ, այսպէս կոչուած էլիտան (վերնախաւը)՝ մտաւորականութենէն մինչեւ լրագրողներ, եւ Սփիւռքի գրեթէ բոլոր ազգային կառույցներու առաջնորդները:

«Մի խօսքով՝ ողջ այն ուժերը, որոնք հայդատականութիւնը, պահանջատիրութիւնը եւ ոչմիթիզականութիւնը դարձրել էին հայրենի ազգային դաւանանքը, ընդ որում, նոյնքան անքննելի, որքան Աստուածաշունչը: Պատկերաւոր ասած՝ թուրքական բոլոր ուժերը, Նիկոլ Փաշինեանի եզրափակիչ դերակատարութեամբ, փայլուն կերպով իրականացրին վազգէն Սարգսեանի երկու «պատուիրանները»:

ա. «Արիւնով նուաճուած հողը թղթով չեն յանձնում» - այս սինքն՝ յանձնում են աւելի մեծ արիւնով, ինչը եւ տեղի ունեցաւ: բ. «Փոխզիջման կը գնանք

Արման Բաբաջանեան կը Գլխաւորէ «Շիրիմեան-Բաբաջանեան Ժողովրդավարներու Դաշինքի» Նախընտրական Ցուցակը

«Շիրիմեան-Բաբաջանեան Ժողովրդավարներու դաշինք»-ի ցուցակը կը գլխաւորէ Յանուն Հանրապետութեան կուսակցութեան ղեկավար մարմնի ներկայացուցիչ, Ազգային ժողովի պատգամաւոր՝ Արման Բաբաջանեան. Բաբաջանեան Դիմատետրի իր էջին վրայ այսօր՝ Մայիս 19-ին հրապարակած է դաշինքի նախընտրական ցուցակի առաջին եռեակը:

Ըստ այդմ՝ երկրորդը Քրիստոնեայ-Ժողովրդավարական կուսակցութեան առաջնորդ՝ Լեւոն Շիրիմեանն է իսկ եռեակը եզրափակած է փաստաբան Սեդա Սաֆարեան:

Մայիսի 18-ին Յանուն Հանրապետութեան եւ Քրիստոնեայ-Ժողովրդավարական կուսակցութիւնները յայտարարեցին Յունիս 20-ին կայանալիք արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն միասնական ձևատու մասնակցելու մասին:

Արամ Սարգսեան կը Գլխաւորէ «Հանրապետութիւն» Կուսակցութեան Ցուցակը

Յունիս 20-ին նախատեսուած խորհրդարանական արտահերթ ընտրութիւններուն «Հանրապետութիւն» կուսակցութեան նախընտրական ցուցակը կը գլխաւորէ կուսակցութեան նախագահ՝ Արամ Սարգսեան:

Ըստ կուսակցութեան դիմատետրի էջին՝ երկրորդը՝ Արտակ Զէյնալեանն է, իսկ երրորդը՝ Անի Խաչատրեանը:

Արտահերթ խորհրդարանական ընտրութիւնները նախատեսուած են Յունիս 20-ին, նախընտրական քարոզարշաւը սկիզբ կ'առնէ Յունիս 7-ին ու կը տեւէ մինչեւ Յունիս 18-ը:

Որոշ կանխատեսումներով ընտրութիւններուն մասնակցող կուսակցութիւններու եւ կամ դաշինքներու թիւը կրնայ հասնիլ 15-20-ի:

Խորհրդարան մուտք գործելու համար կուսակցութիւնները պէտք է յաղթահարեն 5 տոկոսի նուազագոյն շեմը, իսկ դաշինքներու պարագային այդ կը դառնայ 7 տոկոս: Նուազագոյն շեմը չ'յաղթահարած կուսակցութիւններու եւ դաշինքներու տոկոսները կ'աւելնան շեմը անցած ուժերու տոկոսներուն վրայ՝ ըստ համեմատութեան:

Մարութեան Չի Բացառեր, որ Յունիս 20-ի Ընտրութիւնները Չեղարկուին



«Լուսաւոր Հայաստան» կուսակցութեան ղեկավար Ետմոն Մարութեան ելոյթ կ'ունենայ «Մարիոթ-Արմենիա» հիւրանոցէն ներս կայացած համագումարի ընթացքին

Ազգային ժողովի ընդդիմադիր «Լուսաւոր Հայաստան» խմբակցութեան ղեկավարը չի բացառեր, որ սահմանային իրադրութեան լարման հետեւանքով՝ Յունիս 20-ին նշանակուած արտահերթ խորհրդարանական ընտրութիւնները գուցէ ընդհանրապէս տեղի չ'ունենան: «Եթէ ամէն օր ատրպէյճանական զինուժը պէտք է շատանայ թուաքանակով Հայաստանի Հանրապետութեան տարածքում, ի՞նչ ընտրութիւններ յայտնի է խօսքը գնալու, դա ի՞նչ ընտրութիւն է լինելու, ինչի՞ց ենք խօսելու էր ընտրութիւնների ժամանակ», - յայտարարեց Ետմոն Մարութեան:

Արտահերթ ընտրութիւններուն առանց դաշինքի մասնակցելու մասին յայտարարած «Լուսաւոր Հայաստան» Մայիս 23-ին համագումար կայացուց, կառավարման եւ քաղաքական խորհուրդներ ընտրեց, սակայն ընտրութիւններու նախընտրակ ցուցակ չ'հրապարակեց՝ այն դեռ կազմուած չէ: Միայն յայտնի է, որ «Լուսաւոր»-ի վարչապետի թեկնածուն Մարութեանն է, որու խօսքով՝ ցուցակ չեն կազմած, որ նոր մարդոց ու ուժերու ներգրաւելու հնարաւորութիւն ըլլայ:

Այսօր՝ մայիս 24-ին հրապարակուած «Կելլափ Ինթըրնէյշընըլ»-ի հարցումներու համաձայն՝ «Լուսաւոր Հայաստան»-ը այժմ 2 տոկոս վարկանիշ ունի, իսկ խորհրդարան անցնելու համար պէտք է առնուազն 5 տոկոս ձայն հաւաքել:

«Իմ Քայլը» խմբակցութեան Պատգամաւորը Պատասխանած է Ռոպերթ Քոչարեանին

Աժ-ի նիստին, «Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւոր՝ Վահագն Ալեքսանեան պատասխանեց երկրորդ նախագահ՝ Ռոպերթ Քոչարեանին: Այսօր՝ Մայիս 25-ին տեղի ունեցած ասուլիսին, Քոչարեան շարք մը հարցերու շուրջ քննադատութիւն հնչեցուցած է իշխանութեան հասցին:

«Ասում է՝ հնարաւոր են ընտրակեղծիքներ այս ընտրութիւններում: Մա ասում է մի մարդ, ում իշխանութեան օրօք Տաւուշի մարզի մեր սիրելի բնակիչները կարող են պատմել, թէ քանի քուէատուփ է դատարակուել Ադատեւ գետը՝ ընտրութիւնների արդիւնքները չամփոփած,

Կուսակցութեան վարչապետի թեկնածու՝ Ետմոն Մարութեան ներկայացուց իրենց աւելի վաղ կատարած հարցման արդիւնքները. - «Մենք ունեցել ենք հարցում մօտաւորապէս մինչեւ նախկին իշխանութեան դաշտը պառակտուելը, էր ժամանակ ենք ունեցել՝ մենք երրորդ տեղով գնում էինք: Պառակտուելուց յետոյ, նշանակում է, որ էնտեղ հատուածը, որը որ Քոչարեանի շուրջ էր կեդրոնացած, կիսուել է: Հետեւաբար՝ առիթները մեծանում են»:

«Լուսաւոր»-ը ընտրութիւններուն կը մասնակցի «Կայ այլընտրանք, քուէարկի՛ր» կարգախօսով: «Միասին բոլորով դա ասենք, տեսնենք՝ կը ստացուի՞ մեր մօտ, թէ՛ ոչ, որովհետեւ դա լսելու էք բոլոր տեղերում. կայ այլընտրանք, քուէարկի՛ր, կայ այլընտրանք, քուէարկի՛ր», - ըսաւ Մարութեան եւ յաջորդեցին ծափահարութիւնները:

Համագումարի ընթացքին «Լուսաւոր»-ը նոր քաղաքական ծրագիր ընդունեց, գոր ներկայացուց Ազգային ժողովի պատգամաւոր՝ Գէորգ Գորգիսեան: Կուսակցութիւնը առաջարկած է փոխել Սահմանադրութիւնը՝ «ընդլայնել նախագահի եւ խորհրդարանի լիազօրութիւնները, վերականգնել Գիւղատնտեսութեան, Մշակոյթի եւ Սփիւռքի նախարարութիւնները, բնականաբար՝ աւելի արդիւնաւէտ կառուցուածքով», - յայտարարեց Գորգիսեան:

քանի ընտրատուփ է փոխուել: Այս մարդը փորձում է մեզ նմանեցնել, նոյնացնել իր հետ ու մեզ վերագրել ընտրակեղծիքներ՝ դրանով արդէն փորձելով ալիքի այլուրեքութիւն ստեղծել հետագայ յետընտրական իր պատկերացրած գործընթացների համար: Ուզում եմ, որպէսզի շատ յստակ լինի գնահատականը, ուզում եմ, որպէսզի այստեղ միասին արձանագրենք, որ ընտրակեղծիքների մէջ մեզ մեղադրելը չ'ունի բացարձակապէս որեւէ հիմք՝ բացի այդ մարդու մէկ այլ քրոնիկ վախից, որը վերջերս է ձեւաւորուել՝ գալիք ընտրութիւններում ջախջախուելու վախից», - ըսաւ Ալեքսանեան:

ԼՈՒՐԵՐ

Արմեն Սարգսեան ու Նիկոլ Փաշինեան Աշխատանքային Չանդիպում Ունեցած են



Նախագահ՝ Արմեն Սարգսեան ու վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեան հանդիպումի ընթացքին

Նախագահ՝ Արմեն Սարգսեան ու վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեան աշխատանքային հանդիպում ունեցած են եւ անդրադարձած են հայ-ատրպէյջանական սահմանին ստեղծուած իրավիճակին, Հայաստանի ինքնիշխան տարածքներում ատրպէյջանական զինուած ուժերու ստորաբաժանումներուն դուրս մղելու եւ Հայաստանի տարածքային ամբողջականութեան դէմ ոտնձգութիւնները բացառելու ուղղութեամբ կատարուող գործողութիւններուն ընթացքին:

Հանդիպումը նախաձեռնած է Արմեն Սարգսեան եւ հանդիպումը տեղի ունեցած է նախագահի նստավայրը:

Ըստ նախագահի գրասենեակին՝ անոնք կարծիքներ փոխանակած են նաեւ սահմանազատման եւ սահմանագծման աշխատանքներ սկսելու հարցով Հայաստանի դիրքը:

Հայաստան կը Մերժէ «Վիճելի Տարածքներ» Կեղծ Օրակարգի Ներմուծումը. ԱԳՆ Խօսնակ

«Ուժի կիրառմամբ կամ դրա սպառնալիքի օգտագործմամբ պայմաններ չառաջարկուած միջազգային իրաւունքի կոպտագոյն խախտում է: Հայաստանը չի տրուելու նմանօրինակ ճնշումներին», յայտարարած է Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակ՝ Աննա Նաղտալեան՝ պատասխանելով որոշ լրատուականներու հարցերուն:

Նաղտալեան յայտարարած է, որ Հայաստանը կը մերժէ նաեւ «այսպէս կոչուած «Վիճելի տարածքներ» կեղծ օրակարգի ներմուծումը, ինչը վտանգաւոր նախադէպ կարող է հանդիսանալ ուժի կիրառման արդարացի համար նաեւ այլ տարածաշրջաններում»:

ԱԳՆ խօսնակի պնդմամբ՝ չկատարելով Նոյեմբեր 9-ի եռակողմանի յայտարարութեամբ ստանձնած իր պարտաւորութիւնները, մասնաւորապէս՝ հայ ռազմագերիներու եւ պատանդի կարգավիճակի մէջ զտնուող քաղաքացիական անձերու հայրենադարձման եւ այլ մարդասիրական հարցերու առնչութեամբ՝ Ատրպէյջան կրկին ցոյց կու տայ միջազգային յանձնառութիւններու միտումնաւոր դրժման իր վարքագիծը:

Ըստ Նաղտալեանին, Հայաստանի եւ Ատրպէյջանի միջեւ սահմաններու սահմանագծման եւ հետագային սահմանազատման գործընթացները, պէտք է մաս կազմեն

քորոշման եւ ներկայացուցած նախապայմաններուն շուրջ:

Յիշեցնենք, որ Ռուսաստան առաջարկած է սահմաններու հարցով եռակողմանի յանձնաժողով ստեղծել՝ Հայաստան, Ռուսաստան, Ատրպէյջան: Հայաստան յայտարարած է, որ կը համաձայնի, եթէ իր պահանջները բաւարարուին, ատրպէյջանական զօրամիւտները դուրս գան Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածքէն եւ վերադառնան ելման դիրքեր:

Այսօր նախագահն ու վարչապետի պաշտօնակատարը ընդգծած են, որ միայն վերջիններու բաւարարման պարագային կը ստեղծուին անհրաժեշտ պայմաններ՝ այդ ուղղութեամբ համապատասխան քննարկումներ սկսելու համար: Հանրապետութեան նախագահը ներկայացուցած է իր դիտարկումները:

հակամարտութեան համապարփակ խաղող կարգաւորման գործընթացին, «որի շրջանակներում առաջնային կերպով պէտք է հասցեագրուեն Արցախի Հանրապետութեան տարածքների ապաբռնագրաւման եւ Արցախի վերջնական իրաւական կարգավիճակի որոշման հարցերը՝ ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահութեան հովանու ներքոյ»:

«Այս իրավիճակում Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածքից ատրպէյջանական զինուած ուժերի անյապաղ եւ անվերապահ դուրսբերումը Մայիսի 11-ի դրութեամբ ելման դիրքեր, կարող է անհրաժեշտ պայմաններ ստեղծել ի յայտ եկող հարցերը քաղաքական-դիւանագիտական գործիքակազմի շրջանակներում դիտարկելու համար», - յայտարարած է Աննա Նաղտալեան:

Արձագանգելով այն հարցին, թէ ինչպէ՞ս կը գնահատեն միջազգային արձագանգը իրավիճակի վերաբերեալ, ԱԳՆ-ի խօսնակը ըսած է. «Միջազգային իրաւունքի դիրքերից հանդէս եկող եւ Հարաւային Կովկասում կայունութեամբ ու անվտանգութեամբ անկեղծօրէն շահագրգռուած միջազգային մեր գործընկերներն արտայայտել են իրենց աներկբայ դիրքորոշումն առ այն, որ Ատրպէյջանն անյապաղ եւ անվերապահ պէտք է ետ քաշի իր զօրքերը Հայաստանի ինքնիշխան տարածքից»:

Պայտըն Ընդգծած է Արցախի Խնդրի Քաղաքական Կարգաւորման Անհրաժեշտութիւնը

Որպէս ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահ՝ Միացեալ Նահանգները յանձնառու կը մնայ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան երկարաժամկէտ քաղաքական կարգաւորման բանակցութիւններուն օժանդակելուն: Այս մասին գրած է ԱՄՆ-ի նախագահ՝ Ճոզէֆ Պայտըն Ատրպէյջանի նախագահ՝ Իլհամ Ալիեւին այդ երկրի Հանրապետութեան օրուայ առթիւ յղած շնորհաւորական նամակին մէջ:

Ատրպէյջանական լրատուամիջոցներու հաղորդմամբ՝ Պայտըն նշած է, որ Ատրպէյջանի անկախութեան 30 տարիներու ընթացքին երկու պետութիւնները համատեղ աշխատած են անվտանգութեան, ուժանիւթի եւ ժողովրդավարական կառավարման ոլորտներու մէջ:

«ԱՄՆ-ը վճռականօրէն կը սատարէ Հարաւային կազմային միջանցքը շահագործման յանձնելու եւրոպայի ուժանիւթի գանազանութեան գործով Ատրպէյջանի ներդրումը եւ այս տարի Կասպիցի մէջ թուրքմենիստանի հետ համատեղ հանքավայրի հետախուզման ու մշակման մասին յուշագրի ստորագրումը: Մենք երախտապարտ ենք Ատրպէյջանին Աֆղանիստանի մէջ ՆԱԹՕ-ի առաքելութեան եւ



ԱՄՆ-ի նախագահ՝ Ճոզէֆ Պայտըն

ահաբեկչութեան դէմ պայքարի ջանքերուն 20-ամեայ աջակցութեան համար», - APA լրատուական գործակալութեան հաղորդմամբ՝ ըսուած է ԱՄՆ-ի նախագահի նամակին մէջ:

Յիշեցնենք, որ Ղարաբաղեան 44-օրեայ պատերազմի հրադադարի մասին 2020 թուականի Նոյեմբեր 9-ի յայտարարութեան ստորագրումէն յետոյ Ատրպէյջանի նախագահը բազմիցս յայտարարած է, թէ դարբաղեան խնդիրը լուծուած է:

Քրեմլինը Յորդորած է Զուսպ Արձագանգել Հայ-Ատրպէյջանական Սահմանի Սահմանագծման Մասին Չճշդուած Տեղեկութիւններուն

Քրեմլինը յորդորած է չհաւատալ մամուլով հրապարակուած փաստաթուղթերուն եւ զուսպ արձագանգել հայ-ատրպէյջանական սահմանի սահմանագծման ու սահմանազատման մասին չճշդուած տեղեկութիւններուն եւ հաւատալ միայն պաշտօնական աղբիւրներուն:

Անդրադառնալով Հայաստանի, Ատրպէյջանի ու Ռուսաստանի առաջնորդներու միջեւ իբրեւ թէ ստորագրուելիք փաստաթուղթին, որ երէկ տարածուած էր համացանցով, Ռուսաստանի նախագահի մամուլի խօսնակ՝ Տմիթրի Փեքով այսօր ըսած է. «Ընդհանուր առմամբ, այդ այնքան նուրբ խնդիր է, եւ այնքան լուրջ ջանքեր կը գործադրուին այս իրավիճակը կարգաւորելու համար, որ պէտք է շատ զուսպ արձագանգել այդպիսի թեթեամիտ հրապարակումներուն եւ առաջնորդուել միայն պաշտօնական աղբիւրներով»:

Փեքով չէ յայտնած այլ մանրամասնութիւններ փաստաթուղթի մասին:

րամասնութիւններ փաստաթուղթի մասին:

Աւելի վաղ, Ռուսաստանի արտաքին գործոց նախարար՝ Սերկէյ Լաւրով յայտարարած էր, թէ Մոսկուան իր միջնորդական ջանքերը առաջարկած է Պաքուին եւ Երեւանին սահմանազատման հարցով եւ կողմերուն առաջարկած է հայ-ատրպէյջանական յանձնաժողով ստեղծել սահմանազատման համար: Հայաստանի մէջ երէկ մամուլով յայտնուած փաստաթուղթը բուռնօրէն կը քննարկուի, վարչապետի պաշտօնակատարը յայտարարած էր, որ փաստաթուղթը ամբողջովին կը բխի Հայաստանի շահերէն, եւ ան կը պատրաստուի գայն ստորագրել:

Ատրպէյջանի նախագահն ալ իր հերթին երէկ յայտարարած է, թէ պաշտօնական Պաքուն կ'աշխատի Հայաստանի հետ խաղող պայմանագրի, ինչպէս նաեւ սահմանի սահմանազատման ուղղութեամբ:


Վերին Շորժա Սահմանային Հատուածին Վրայ Մէկ Հայ Զինուոր Զոհուած է

Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը հաղորդած է, որ Մայիս 25-ին ժամը 14:20-ի սահմաններուն հրագէնի կիրառմամբ միջադէպ արձանագրուած է Հայաստանի Գեղարքունիքի մարզի վերին Շորժայի սահմանային հատուածը:

Ըստ Հայաստանի ռազմական գերատեսչութեան՝ մասնաւորապէս հակառակորդի կողմէն հայ դիրքապահներու ուղղութեամբ կրակահերթեր արձակուած են:

«Հակառակորդի արձակած կրակահերթերից յետոյ սկսուած փոխհրձգութեան արդիւնքում մահացու հրագէնային վիրաւորում է ստացել պայմանագրային զինծառայող, կրտսեր սերժանտ Վ. Յ. Խուրշուդեանը (ծնուած 1989 թ.)», - յայտնած է նախարարութիւնը՝ նշելով, որ իրավիճակը այս պահու վերահսկելի է, կրակոցներ չկան, իսկ միջադէպի մանրամասնութիւնները կը ճշդուին:

Առցանց Հարցման Արդիւնքներով Փաշինեան Վստահ Առաջատար Է



Ըստ առցանց հարցումներու ամենամեծ հարթակներէն մէկուն՝ typeform-ի հաւաքած տուեալներով՝ Հայաստանի գաղութ ընտրութիւններէ հետ կապուած, մասնակցած է 4000-է աւելի քաղաքացի, ինչ որ բաւականին մեծ ցուցանիշ է, եթէ նկատի առնուի, որ աւանդական հարցախոյզներուն, ինչպէս «Կալով» ընկերութեան, կը մասնակցին 1000-1200 հոգի:

Այս հարցման արդիւնքներով 66.5 տոկոսով առաջատար է Նիկոլ Փաշինեանը, երկրորդ դիրքի վրայ է Արամ Զաւէնի Սարգսեանը (13.6%), երրորդ դիրքի վրայ Շիրինեան-Բարսեղեանեան դաշինքը (10.4%): Քոչարեանը 6.1 տոկոսով չորրորդ տեղը կը գրաւէ եւ առաջիկայ չի յաղթահարեր նուազագոյնը 7 տոկոսի անցողիկ շեմը:

Լեւոն Տէր Պետրոսեան 1.7 տոկոսով հինգերորդ դիրքի վրայ է:

Հայաստանեան «Կալով» ընկերութիւնը, որ կապ չունի Ամերիկեան նշանաւոր «Կալովին» հետ, վերջերս հրատարակած իր հարցախոյզի տուեալներով Փաշինեանի վարկանիշը 24 տոկոս կը գնահատէ, իսկ Քոչարեանի գլխաւորած դաշինքինը 14 տոկոս:

Աւելցնենք որ, Հայաստանեան աւանդական հարցախոյզները վստահութեան չեն արժանանար եւ շատ յաճախ իրենց արդիւնքները կը յարմարեցնեն հարցախոյզը ապաւորող կողմի հաշիւներուն:

«Մասիս» կ'անդադառնայ այս հարցախոյզներուն իր ընթերցողներուն որոշ պատկերացում տալու համար:

Քոչարեանին Աջակցող Խումբը Հայ Զինուորներուն Ծաղրող Ատրպէյճանական Եւ Թրքական Տեսանիւթեր Կը Տարածէ

Մայիս 19-ին, նախկին իշխանութեան պատկանող մամուլով տարածուեցաւ տեսանիւթ, ուր ատրպէյճանցիները յարձակած էին հայ զինծառայողներուն վրայ: Նոյն լրատուամիջոցներու մեծ մասը յետոյ չտարածեցին դէպքերու հակառակ ընթացք ունեցող տեսանիւթը, ուր արդէն հայ զինծառայողները նոյնկերպով կը վարուէին ատրպէյճանցիներու հետ եւ կը վճարէին ՀՀ սահմանէն:

Civic.am-ի ձեռքի տակ յայտնուեցան screenshot նկարներ Ռոպերթ Քոչարեանին աջակցող «Նախագահ Քոչարեանի համախոհներ» անունով, մօտ 10,000 հետեւորդներ ունեցող խումբէն: Տեսանիւթերէն մէկը մեր զինուորիներուն վրայ յարձակող ատրպէյճանցի զինծառայողներուն կողմէ տեսանկարահանուած հրապարակումն է եւ վերնագրուած է հետեւեալ կերպ՝ «շատ նուաստացուցիչ տեսարան է, ոչխարի հօտի պէս վտարում են մեր զինուորիներին» եւ այն տարածուած է երկու անգամ, երկու պարագային ալ ատրպէյճանցի օգտատէրերն են սկզբնաղբիւրը, իսկ տարածողները՝ Քոչարեանին աջակցող խումբի անդամներ:

Նոյն խումբին մէջ տարածուած է նաեւ «Sahib Zamin» անունով թուրք օգտատիրոջ կողմէ տարածուած տեսանիւթը, ուր ՀՀ վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեանի այցն է Գեղարքունիքի մարզի N գօրամաս, ուր

վարչապետի ժամանակաւոր պաշտօնակատարը Մայիս 9-ի կապակցութեամբ պետական պարգեւներ յանձնած էր շարք մը զինծառայողներու, սակայն տեսանիւթի ձայնը սարքուած է եւ անով թուրք օգտատէրը կը ծաղրէ Նիկոլ Փաշինեանը եւ հայ զինծառայողները:

Screenshot նկարներէն մէկը, Արցախի նախագահ՝ Արայիկ Թարուծիւնեանը ծաղրող նկար է, որու հեղինակը կրկին ատրպէյճանցի օգտատէր մըն է:

Նոյն խումբին մէջ իր հրապարակումները տարածած է «Shame.am» էլեկտրոնային լրատուական կայքէջի հիմնադիր՝ Արտեմ Խաչատրեան, որ նախապէս մեր տեղեկութիւններով, կ'աշխատէր Սերժ Սարգսեանի փեսայի՝ Միքայէլ Մինասեանի համար, իսկ այժմ, կարծես Ռոպերթ Քոչարեանի կողմը անցած է: Յիշեցնենք, որ Արտեմ Խաչատրեան 2020 թուականին իր դիմատետրեան էջին վրայ գրառում ըրած էր, ուր Քաղաքական օրագնացութեան դեկավար՝ Տաթևիկ Ռեւազեանի եւ անոր նորածին դստեր հասցէին վիրաւորանքներ, ընդհուպ մինչեւ հայհոյանքներ հնչեցուցած:

Ի դէպ, փոքրիկ դիտարկումի միջոցով պարզ դարձաւ, որ Ռոպերթ Քոչարեանին եւ անոր «Հայաստան» դաշինքին աջակցող դիմատետրի խումբներուն մէջ կը տարածուին չճշդուած եւ կեղծ տեղեկութիւններ:

ԱՄՆ-ի Գոնկրէսականները Կոչ Ուղղած Ե՛մ՝ Դադրեցնելու Որեւէ Տեսակի Ռազմական Աջակցութիւն Ատրպէյճանին

ԱՄՆ-ի Ներկայացուցիչներու պալատի քանի մը տասնեակ անդամներ միացած են Տեւիտ վալատայի կոչին ուղղուած նախագահ Ճօ Պայտընի վարչակազմին, ու յորդորած է դադրեցնել ԱՄՆ-ի որեւէ տեսակի ռազմական աջակցութիւն Ատրպէյճանին: Մայիս 24-ին գոնկրէսականներու յղած նամակով նաեւ կոչ եղած է Պայտընին հրատապ կերպով վերանայիլ Ատրպէյճանին տրամադրուող ռազմական օգնութիւնը սահմանափակող «Ազատութեան աջակցութեան օրէնք» 907-րդ ուղղումէն հրաժարելու որոշումը:

«Ամերիկեան հարկերէն գանձուած նոյնիսկ մէկ տոլար պէտք չէ ուղարկուի՝ զինելու նաւթային պաշարներով հարուստ Ատրպէյճանի զինուած ուժերուն՝ երկիր մը, որ Արցախը ցեղային գտման ենթարկեց եւ կը շարունակէ պահել հայ

ռազմագերիները, իսկ հիմա գրաւած է տարածք Հայաստանի Հանրապետութեան մէջ», - նշած է վալատայի Պայտըն ուժի մէջ չձգէ 907-րդ ուղղումը, ապա ԱՄՆ-ի Քոնկրէսը պէտք է օրէնքով արգիլէ Ալիեւի ռեժիմին որեւէ տեսակի գէնքի կամ աջակցութեան ցուցաբերումը:

Գոնկրէսականներու նամակով նշուած է, որ Ատրպէյճանը կը շարունակէ ապակալուեցնող դերակատարում ունենալ տարածաշրջանէն ներս, յարձակում կը գործէ հայերու դէմ՝ անտես իսկ հայրենիքին մէջ, ինչպէս նաեւ կը տապալէ ԼՂ հակամարտութեան խաղաղ կարգաւորման ուղղուած ջանքերը: «Մենք կոչ կ'ընենք անյապաղ դադրեցնել ԱՄՆ-ի որեւէ տեսակի ռազմական կամ անվտանգային աջակցութիւն Ատրպէյճանին», - նշուած է նամակին մէջ:

Սահմանային Իրավիճակը

Շարունակուած էջ 1-էն

մարում եմ արդիւնաւէտ», - ընդգծեց վարչապետի պաշտօնակատարը:

Մայիս 25-ին, ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցուածքներու նախարարի պաշտօնակատար՝ Սուրէն Պապիկեան յայտարարեց որ, Սեւ Լիճի շրջանի հետ կապուած բանակցութիւնները կը շարունակուին եւ որեւէ փաստաթուղթ այս պահուն չէ ստորագրուած:

«Այս պահին որեւէ փաստաթուղթ առկայ չէ: Այսինքն՝ ցանկացած առաջարկութիւն, որ կարող է հնչել երրորդ կամ միջնորդ երկրի կողմից, բնականաբար, թղթային տարբերակով թէ՛ պէտք է մեզ գալ, թէ՛ գնայ հակառակ կողմին, եւ այդ գործընթացը չի ենթադրում, որ եթէ այդ թուղթը

եկել է այդ տեսքով, ապա մեզ ընդունելի է այդ տեսքով», - նշեց Սուրէն Պապիկեան վստահեցնելով, որ այս աշխատանքային գործընթաց է, եւ այդ փաստաթուղթը ստորագրելու որեւէ պայման առկայ չէ:

Անդրադառնալով այս պահուն ընթացող բանակցութիւններուն, նախարարի պաշտօնակատարը տեղեկացուց, որ բանակցութիւնները կը շարունակուին: «Բնականաբար, հիմնական հատուածը Սեւ լիճի հատուածն է, որտեղ որոշակի հատուածներում տեղակայուած են հարեան երկրի զինուորները, բաց շատ տեղերում էլ իրավիճակն այլ է: Փորձում ենք բանակցային ճանապարհով հնարաւորինս դանդաղ, առանց որեւէ սրացման խնդիրը լուծել: Հիմա դրանում ներգրաւուած են նաեւ մեր ռուս գործընկերները, նաեւ ՀԱՊԿ-ի գործընկերները»:

«Խոշոր Սուտը»

Շարունակուած էջ 1-էն

տղն Ամերիկա օրինաւոր նախագահն է յաջորդ չորս տարիներուն եւ այդ ենթակայ չէ փոփոխութեան: Սակայն, մեծ թիւով Համրապետականներ կը մերժեն ընդունիլ այս իրողութիւնը: Համրային կարծիքի վերջին հարցախոյզներուն համաձայն ժողովուրդի այս հատուածի 52 տոկոսը չընդունի ընտրութիւններու արդիւնքը:

Նոյն այս «խոշոր սուտը» պատրուակ օգտագործելով, հանրապետական մեծամասնութեամբ կառավարուող նախագահներու մէջ նոր օրէնքներ կը հաստատուին ընտրութիւններու մասնակիցներու առջեւ խոչընդոտներ ստեղծելու նպատակով եւ արդիւնքներու հաստատումը նախագահին խորհրդարաններուն վերապահելով: Այս նոր օրէնքներու գլխաւոր նպատակը սեւամորթ ընտրողներու մասնակցութեան թիւի նուազեցումն է՝ առաւելութիւն ապահովելով հանրապետական թեկնածուներուն:

Քաղաքական շրջանակները խիստ մտահոգուած են այս երեւոյթներով եւ շատեր այն կարծիքին են, որ եթէ այս նոր օրէնքները գործին վերջին ընտրութիւններու ընթացքին թրամի կը յաջողէր հասնիլ իր նպատակին:

տակին ու շրջել արդիւնքները:

Ներկայիս Դեմոկրատ մեծամասնութիւնը կը փորձէ առաջը առնել նման գարգացումներուն եւ դաշնակցային մակարդակով ընտրական իրաւունքներու միօրինակութիւն մտցնելու օրինակներու առաջարկած է Գոնկրէսի երկու պալատներէն: Համրապետականները բնականաբար կ'ընդդիմանան նման առաջարկներուն՝ գլխաւորաբար վախճալով թրամիւն, որ իրեն հաւատարիմ կողմնակիցներու բանակ մը ունի այդ կուսակցութեան շարքերէն ներս, որոնք կրնան վտանգել իրենց կամքէն շեղողներուն վերընտրութիւնը՝ ներկուսակցական պայքարի ընթացքին:

Նախկին նախագահի տարածած սուտերուն եւ որոշ հանրապետականներու մեղսակցութեան պատճառաւ Ամերիկան ներկայիս կը գտնուի վտանգաւոր խաչմերուտին մը առջեւ, որ կը սպառնայ երկրի ժողովրդավարութեան եւ մէկ նախագահէն միւսը իշխանութեան խաղաղ փոխանցման սկզբունքին, որ խաթարուեցաւ վերջին ընտրութիւններէն: Ետք եւ կրնայ սովորութիւն դառնալ ապագային, իր բոլոր բացասական ու վտանգաւոր հետեւանքներով:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ԱՐԱՐԱՏ» ՕՐԱԹԵՐԹԻ Նոր Սարդարապատի Հրամայականը



Սարդարապատի հերոսամարտին հիմաստն ու նշանակությունը այդքան հրատապ դարձած չէր, որքան այս օրերուն: 1918-ի եւ մեր օրերուն զուգահեռները բազմաթիւ են ու ցայտուն: Պատմութեան հոլովոյթը կը վերաթափարկէ կարծէք ամենայն ճշգրտութեամբ: Համանման իրադարձութիւնները սկաւառակի նման կը կրկնուին մեր աչքերուն դիմաց: Անգամ մը եւս մեր լինելութեան պայքարը դարձած է օրախնդիր եւ գոյութեան կան հարցը կը կրծէ հոգիները խռովեալ: Սարդարապատի զանգերը դարձեալ կը ղօղանջեն եւ երեւի առաւել՝ սաստկութեամբ: Աւելի քան հարիւր տարի ետք, նոր Սարդարապատի հրամայականն է ծառայած մեր դիմաց:

1918-ին, երբ հայութիւնը դեռ ուշքի չէր եկած ցեղասպանութեան զարհուրելի հարուածէն, երբ կը տուայտէր իր անհաշուելի կորուստներուն խոր կսկիծով եւ զերմարդկային աւիւնով կը ճգնէր շունչ մը քաշել, ահա օսմանեան զօրքերը սրարշաւ յառաջխաղացքով կը ցանկային ամբողջապէս հաշուեյարդարի ենթարկել հայութեան վերջին մնացորդացն անգամ: Ահեղ ամիսներ կը յաջորդէին իրար 1918-ի սկիզբին, երբ թրքական կանոնաւոր բանակը կը մերձենար Արաքս գետ եւ ապա կ'որոշէր խոյանալ արեւելեան Հայաստան լիովին վերացնելու հայութեան վերջին բեկորները գոտեմարտող: Չկա՛ր այլընտրանք՝ բացի մահու կենաց պատերազմէն: Օրհասական պահը մէ՛կ պատգամ ունէր՝ վե՛րջին շունչ մաքառիլ յանուն գոյութեան եւ հայրենիքի: Աստեղային ժամն էր մեր պատմութեան, որ պէտք էր դիմակալել անխորտակելի կամքով ու ոգիով:

Հարաքիլիսա, Բաշ-Ապարան եւ Սարդարապատ թէ՛ զիծը եղաւ իսկական ռազմաճակատ, ուր օսմանեան եաթաղանն ու հայկական սուլինը բախեցան վճռորոշ գոտեմարտով: Մին՝ զաւթողական մոլուցքով, միւսը՝ հայրենի հողին վրայ խաղաղօրէն ապրելու վճիռով: Ուստի, Սարդարապատի հերոսամարտը ռազմարուեստի փայլուն օրինակ մը ըլլալէ անդին՝ բարոյական առումով համազգային պոռթկում մըն էր իր ոգիով: Ան նաեւ ունեցաւ քաղաքական բովանդակութիւն, որովհետեւ հանդիսացաւ հիմնաքարը Հայաստանի հանրապետութեան ծնունդին, որուն վրայ յետագային կառուցուեցաւ եւ շքեղ կերպարանք ստացաւ հայկա-

կան պետականութիւնը՝ իր բոլոր ստորոգելիներով: Հետեւաբար, Սարդարապատը, անտարակուսելիօրէն, թուականն է հայոց վերածնունդին՝ իր դարաւոր մահաբունէն: Վկայական մը՝ վերապրելու իրաւունքով: Դաժան ստուգարք մը՝ յաջողութեամբ պսակուած:

Սարդարապատի մարտադաշտ ուղղուած էին բոլորը՝ անխտիր: Խրամատներուն մէջ գինուորն էր իր շինական եղբօր հետ, մայրն էր ու բանուորը՝ կղերականին եւ մտաւորականի կուշտին եւ հրետանաւորն էր՝ հեծեալին կողքին: Եգիտի, ռուս թէ հայ, արցախահայ թէ արեւմտահայ կամ արեւելահայ մէկ պատնէշի ետին ուխտած էին սանձել վայրագ ոսոխը արեան ծարաւի:

Այդ օրերուն, ժողովուրդին տարածուած կոչը կ'ըսէր. «Դիմում եմ ձեզ, ձեր ամուր հաւատքին, ձեր խորունկ հայրենասիրութեանը: Դուք՝ աշխատանքի զաւակներ, դուք ձեր առողջ բնագոյով աւելի սուր մընջողով կը զգաք հայ ժողովրդի ցաւն ու զուլումը: Ազգն ու հայրենիքը վտանգի մէջ են: Ելէ՛ք, մեր քաջեր, ելէ՛ք ձեր կրծքերը դէմ արէ՛ք ու դարձէ՛ք ամուր պատնէշ թշնամու հանդէպ, այն թշնամու, որ սպառնալիքօրէն արշաւում է յեղափոխութեան դէմ, ձեր իրաւունքների, ձեր հողի ու ազատութեան դէմ:

Հայէ՛ր, կոչն ամէնքիդ ենք ուղղում: Ամէնքը պիտի ոտքի ելնեն՝ զէնք դառնալու կամ գինուորի դժուարին բեռը թեթեւացնելու համար, ամէնքն իրենց մասնակցութեան բաժինը երեւան հանեն,

ծերն ու երիտասարդը, հարուստն ու աղքատը, տղամարդն ու կինը, ամէնքը, ամէնքը...»:

Անհաւասար հերոսամարտին արդիւնքը անխուսափելի էր՝ յաղթանակ: Բանաստեղծին իսկ բնութագրումով՝ ելքը գտան «Խենթերը»: Այս անգամ, թշնամիին խուճապահար փախուստը մարտական մկրտութիւնը հանդիսացաւ ժողովուրդի մը, որ նոր դուրս եկած էր Եղեռնի դժոխքէն: Եւ տասնամեակներ հայրենիքի մէջ թէ ամէնուրեք Սարդարապատը յետ-եղեռնեան յաղթանակին խորհրդանիշը հանդիսացաւ յաջորդական սերունդներու համար: Յարութեան տօնն էր ան փաստօրէն. վերստին կեանքի անհերքելի ապացոյցը: Եւ հոն՝ Սարդարապատի դաշտին վրայ բարձրացաւ վիթխարի կոթողը վերածնունդին, Սարդարապատի հօր երգը իր խրոխտ երաժշտութեամբ դարձաւ քայլերդ համահայկական: Սարդարապատի զանգերուն ղօղանջները արձագանգեցին հոն՝ ուր հայ կար, ապրող եւ արարող հայ, բաբախուն սիրտով հայրդիք:

-Այո, բոլորս ալ նկատեցինք, որ Յեղափոխութեան ճանաչման շուրջ Պայտընի յայտարարութեանէն ետք նախագահ էրտողանի եւ Թուրքիոյ արձագանգը շատ աւելի գուսպ էր, քան ինչ որ եղած էր Եւրոպական այլ երկիրներու կողմէ ճանաչումէն ետք. ատոր համար կան մէկէ աւելի պատճառներ. առաջինը այն է, որ էրտողան կը գիտակցէր, որ ինք նախկին յարաբերութիւնները չի կրնար ունենալ Պայտընի հետ, ինչ որ ունէր Թրամփի հետ. Թրամփի հետ մնացուն հեռաձայնային խօսակցութիւններու մէջ էր եւ նոյնիսկ ամերիկեան մամուլը զարմանք կը յայտնէր այդպիսի սերտ եւ մնացուն յարաբերութիւններու առկայութեան մասին, ոմանք այդ կը բացատրէին Թրամփի տնտեսական եւ պիզնես շահերով, որ ունի Թուրքիոյ մէջ, միւս կողմէ նաեւ Թուրքիոյ տնտեսութիւնը, դրամանիշը անկումի մէջ է եւ էրտողանի համար շատ կարեւոր է, որ երկու տարի ետք

Շար.ը էջ 15

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Announces the opening of the
2021 AEBU Scholarship Program
Empowering Our Youth for a Brighter Future


To apply, visit our website
WWW.AEBU.ORG

APPLY NOW
Through June 31, 2021

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

626-344-7321
AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE
1060 North Allen Avenue • Pasadena, CA 91104

Սովետական Քարտեզի ու Իրական Պատկերի Տարբերությունները. Անկլաններն ու այլ Տարածքները



ԱՆԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Վերջին օրերին հանրային քննարկման առարկայ է դարձել հայ-ատրպեյճանական պետական սահմանի սահմանագծման եւ սահմանագատման գործընթաց սկսելու հարցը: Թեմայի շուրջ մի շարք հանրային բողոքի ակցիաներ տեղի ունեցան, Ազգային ժողովի յատուկ նիստ գումարուեց, քաղաքացիական հասարակությունը յայտարարութեամբ հանդէս եկաւ:

Տարբեր շրջանակների կողմից հիմնական քննարկման առարկայ դարձաւ սովետական Ատրպեյճանի ունեցած երեք անկլանների՝ Արարատի մարզի Տիգրանաշէնի (Քեարքի) եւ Տաւուշի մարզի Վերին Ոսկեպարի եւ Բարխուդարլուի ճակատագիրը:

Թէեւ «Փաստերի ստուգման հարթակը» արդէն պարզել է, որ անկլանները, ներպետական օրենսդրութեամբ, հանդիսանում են Հայաստանի տարածք, եւ դրանց փոխանցումը այլ պետութեան կարող է լինել միայն հանրաքուէի միջոցով (համաձայն Սահմանադրու-

թեան), իսկ Արտաքին գործերի նախարարութիւնը Մայիսի 21-ին յայտարարել է, որ սահմանագատումը կարող է լինել միայն Արցախի կարգավիճակի որոշման բանակցութիւնների հետ միասին, քննարկումները, այդուհանդերձ, չդադարեցին:

Միաժամանակ, քանի որ, ենթադրաբար, սահմանագատման հիմնական հիմքերից մէկը կարող է լինել Սովետական Հայաստանի ու Ատրպեյճանի սահմանը (որը նաեւ նշուած է սովետական ռազմական քարտեզներում), մենք փորձեցինք պարզել, թէ Սովետական Ատրպեյճանի որքա՞ն տարածքն է, որ ներկայումս գտնուում է Հայաստանի Զինուած ուժերի վերահսկողութեան տակ, եւ հակառակը՝ որքա՞ն տարածք է, որ Սովետական Հայաստանի մաս էր, բայց հսկում է ատրպեյճանական բանակի կողմից:

Այդ սահմաններում ուսումնասիրեցինք ատրպեյճանական նախկին երեք անկլանների ու Սովետական Ատրպեյճանում առկայ հայկական Արծուաշէն անկլանի մակերեսները, ինչպէս նաեւ Տաւուշի

մարզում հայկական զորքերի փաստացի տեղակայման ու սովետական երկու հանրապետութիւնների սահմանի (որոնք համընկնում են Google-ի քարտեզների սահմանների հետ) տարբերութիւնները:

Ատրպեյճանի հետ սահմանակից միւս՝ Գեղարքունիքի, Արարատի ու Սիւնիքի մարզերում հայկական բանակի դիրքերը հիմնականում համընկնում են սովետական քարտեզի հետ՝ բացառութեամբ Մայիսի 12-ից յետոյ Գեղարքունիքի ու Սիւնիքի մարզերում հայկական տարածքներ խուժած ատրպեյճանական ստորաբաժանումների: Այդ ստորաբաժանումների ճշգրիտ տեղերը յայտնի չեն, եւ դրանք չենք դիտարկում ստորեւ, քանի որ պաշտօնական երեւանը սահմանագատման հիմնական պահանջ է համարում այդ ստորաբաժանումների վերադարձը ելման դիրքեր:

Արարատի եւ Վայոց Ձորի Մարզեր

Արարատի մարզում սովետա-



կան հանրապետութիւններից հիմնական սահմանային տարբերութիւնը Տիգրանաշէնի (Քեարքի) նախկին անկլանն է, հետեւապէս՝ այդ մարզի մասով դիտարկուած է միայն դա: Վայոց Ձորի մարզի

Չիւա գիւղի մօտ հայկական բանակի դիրքերը սովետական հանրապետութիւնների սահմաններից մօտ 6 քկմ-ով առաջ են, եւ դա միակ հայկական տարբերութիւնն է սովետական Նախիջեւանի ու Հայաստանի միջեւ եղած սահմանից:

Եթէ նախկին անկլանների մակերեսի հաշուարկը առաւել ճշգրիտ է, ապա հայկական բանակի կողմից հսկուող տարածքների ու սովետական հանրապետութիւնների սահմանի տարբերութեան մակերեսի հաշուարկը մօտաւոր է: Բանն այն է, որ Զինուած ուժերի կողմից հսկուող տարածքը միարժէքորէն որոշելու հնարաւորութիւն չկայ, եւ այն մօտաւոր հաշուարկում է հակառակորդին առաւել մօտիկ գտնուող հայկական դիրքերի տեղակայմամբ:

Անկլանները

Սովետական Հայաստանում ատրպեյճանական անկլաններն էին Վերին Ոսկեպարը (Տաւուշի Ոսկեպար գիւղից արեւմուտք), Բարխուդարլու եւ Սոֆուլու գիւղերի

անկլանը (Տաւուշի կայան գիւղից արեւմուտք) եւ Տիգրանաշէնը (նախկին Քիարքին՝ Արարատի մարզում): Ատրպեյճանի տարածքում

Շար.ը էջ 15

Չարիքը Կեդրոնացեալ Դրութեան Սէջ Է

ՎԱՐՈՒԺ ԹԵՆՊԵԼԵԱՆ

Ժողովրդավարութիւնը անկասկած կ'ենթադրէ ժողովուրդին իշխանութիւնը իբրեւ ընդհանուր սկզբունք՝ ընդգրկելով նաեւ խօսքի, խղճի եւ մամուլի ազատութիւններ, բազմակուսակցական դրութիւն, ընկերային եւ տնտեսական արդարութիւն, մէկ խօսքով՝ ամէն ինչ, որ կը ծառայէ ժողովուրդի մը լայն խաւերու բարօրութեան եւ անկաշկանդ զարգացումին:

Յաճախ հարց կը տրուի, թէ ժողովրդավարութիւնը պետական վարչաձեւ է, թէ՞ ապրելու եղանակ ու աշխարհահայեացք, միայն տեսութիւնն է, թէ՞ կիրարկելի ընտրանք:

Գլխաւոր հարցը կը ծագի անկէ, թէ ինչպէ՞ս կը բացատրուի ժողովուրդին իշխանութիւնը՝ նաեւ նկատի առնելով հայաստանեան մերօրեայ իրականութիւնը, եւ թէ ինչպէ՞ս կարելի է կիրարկել ու գործնականացնել գայն: Արդեօք միայն երեսփոխան ընտրելը, եւ այդ ալ ընտրական ներկայ օրէնքին համաձայն, բաւարար պէտք է նկատուի ժողովուրդին իշխանութեան հաստատման համար, որուն անունով կը ճառեն բոլորը: Արդեօք ժողովրդահաճոյ կարգախօսերը եւ

անոնց յաղթանակը իսկապէս ժողովուրդը, ուղղակի թէ անուղղակի միջոցներով, մասնակից կը դարձնէ՞ պետական իշխանութեան, անոր որոշումներուն եւ կառոյցներուն:

Հայաստանաբնակ մեր ժողովուրդին իշխանութիւնը կը դառնայ անիմաստ, երբ կարգախօսերը կը յաղթանակեն, բայց տնտեսական եւ ընկերային անարդարութիւնը կը յամենայ, այլ խօսքով՝ երբ գիւղական ու մանաւանդ սահմանային շրջանները կը մնան թերաճ, երբ օլիկարքական կեղեքումը արմատականօրէն վերջ չի գտներ եւ ազգային եկամուտը արդարօրէն չի բաշխուիր, եւ երբ մանաւանդ (ընդգծուած) օլիկարքները քողարկուած տարագնեքով եւ «ժողովուրդին ձայներով» կը վերադառնան քաղաքական թատերաբեմ:

Հոսկէ կը ծագին տնտեսական եւ ընկերային ժողովրդավարութեան կիրարկման պահանջները, որոնք խորքին մէջ ժողովրդավարական առանձին «ճիւղեր» չեն եւ կարելի չէ գանոնք անջատել ժողովրդավարական ընդհանուր սկզբունքներէն: Ժողովուրդին իշխանութիւնը կը մնայ միայն գաղափարախօսական յանկերգ եւ վերափայտման տեսիլք, եթէ իսկապէս ժողովուրդին կամքը ինքզինք չի կրնար արտայայտել կարեւոր որո-

շումներու կայացման գործընթացին մէջ: Ժողովուրդին կամքին արտայայտութիւնը կը մնայ խաբուսիկ, երբ ընտրական ամէնէն յառաջադէմ ու փայլուն օրէնքները լծակից կը դառնան կեդրոնաձիգ իշխանութիւններու ստեղծման:

Դժբախտաբար, արեւմտեան թէ արեւելեան կողմն աշխարհի կան բազմաթիւ ժողովուրդներ, նաեւ՝ գաղափարախօսական կուսակցութիւններ, որոնք այս կամ այն ձեւով սկսած են յանձնուիլ կեդրոնաձիգ իշխանութիւններու քմահաճոյքին՝ ընթանալով մարդկային յառաջընթացի ճիւղ հակառակ ուղղութեամբ:

Իշխանութեան կեդրոնացումով կը կեդրոնանան պետութեան բոլոր կառոյցները՝ սկսելով տնտեսութենէն, ընկերային ապահովութենէն մինչեւ պարզ սպասարկութիւնները, իսկ իշխանավարութիւնը կը դառնայ քաղաքակերտ, եւ կ'անտեսուին գիւղերն ու ծայրամասերը, եւ մեր պարագային՝ յոյժ կարեւոր սահմանային շրջանները:

Չարիքը կեդրոնացումին մէջն է անկասկած, որ կարելի է նկատել ժողովրդավարութեան հակաիշխ:

Եւ երբ կը խօսուի ընկերային եւ տնտեսական արդարութեան մասին, եւ իբրեւ գործնականացում կ'առաջադրուի ժողովրդային լայն խաւերուն իրաւ մասնակցութիւնը իշխանութեան, առաջին հերթին

պէտք է վերջ տալ իշխանութեան կեդրոնացումին, եւ ժողովրդավարութեան իրաւ գործնականացումը միջոց նկատել ապակեդրոնացեալ իշխանութեան՝ քաղաքական, ընկերային եւ տնտեսական բոլոր մարզերուն մէջ:

Այս առումով, ընտրական օրէնքները եւ հաշուետւութեան ու հաշուառութեան դրութիւնը պէտք է ցոլացնեն նաեւ ապակեդրոնացման հիմքերը:

Բոլորիս սիրելի քաղաքամայր Երեւանը չէ միայն Հայաստանը:

Ապակեդրոնացեալ դրութեամբ, գիւղական շրջաններու մէջ նաեւ քաղաքական իշխանութիւններու ստեղծումը եւ գիւղատնտեսական տնտեսավարութեան յառաջացումը՝ արհեստագիտութեան, գբօսաշրջութեան եւ ճարտարարուեստի ապակեդրոնացեալ զարգացման գուգահեռ, առանց անտեսելու նաեւ օրէնքի գերիշխանութիւնը, մեր կարծիքով, մեծապէս կը սատարեն տնտեսութեան կայունացման, բարգաւաճման եւ մանաւանդ գիւղէն քաղաք հոսքի կասեցման, եւ որոշ ժամանակ ետք՝ ընդհանուր արտագաղթի աղէտին դարմանումին:

Նաեւ չմոռնալ, որ օլիկարքները կ'ամօնեն եւ կը ճիւղաւորուին, ու փտածութիւնը կը զարգանայ կեդրոնաձիգ իշխանավարութեան մէջ:

Ի Յիշտակ Անդրանիկ Սարեանի 9-րդ Տարեկիցի Առիթով

Ռ. ԿՈՐԻԻՆ


Արդեն մի քանի շաբաթ է նոր գրքիս կազմաւորմամբ էի զբաղուած, հաւաքած թերթերի տրցակներում գրած յօդուածներս էի առանձնացնում ներառելու գրքումս, այդ փնտռութիւն եւ դասաւորման ընթացքում հանդիպեցի «Նոր կեանք» շաբաթաթերթի յունիս 28, 2007 թ. Անդրանիկ Սարեանի գրախօսական յօդուածին գրուած՝ «Մեր կեանքի ուղին դէպի...» առաջին գրքիս կապակցութեամբ, տեղեկատուական, քաջալերական եւ գնահատական մեկնաբանութեամբ: Ձեռքիս աշխատանքը անկախ ինձանից կանգ առաւ եւ միտքս բանել սկսեց ողորմած հոգի Նահապետի մասին, անցեալի քաղցր յուշեր մէկը միւսին յաջորդելով օղակների պէս զոդուած տողանցեցին սկսեալ Թեհրանից, ուր արդէն ծանօթ էի նրա գրականութեան կարգապահ լինելով պատմութեան կարգապահ լինելով պատմութեան դասընկերները, դեռ մտքումս դաջուած են մնում նրա հոյակապ պատմութեամբ՝ «Տեսայ Հայաստանը» Վիկտոր Համբարձումեանի մասին Փարիզում: 2005-ին Ամերիկա հաստատուելով փնտռում էի Նահապետին հանդիպել, որը ողորմած հոգի Մինաս Տէր Սարգսեանի աջակցութեամբ կատարուեց, քանուկ տարիների կտրուածքով հանդիպումը մեղրածորի յատկութիւն ունեցաւ, այստեղից սկսեց մեր յաճախակի հանդիպումները: Նրա օգնութեամբ Louis Ave. փողոցում իրենց բնակութեամբ համալիրում բնակարան վարձակալեցինք եւ դարձանք մօտիկ կարեւորներ: Հարեւանութիւնը կարճ տեւեց, սակայն մեր բարեկամութիւնը շարունակուեց:

Երկրորդ գրքիս մէջ հակիրճ բառերով անդրադարձել եմ Նահապետի մասին իր կենդանութեան օրօք, որից կարող եմ ենք՝ 2006 թ. ինձ համար մի տեսակետից անմոռանալի յուշերով պարտուեց, այն որ Նահապետի հետ իմ վաղեմի ծանօթութիւնը բարեկամութեան վերածուեց այստեղ Կլեմտէյլ քաղաքում 28 երկար տարիների թաւալումից յետոյ, որը նաեւ ուրախութեան առիթ դարձաւ:

Նահապետ կոչելով մեզ համար միայն տարիքը չէ, որ պատկերանում է մեր աչքերի առջեւ, այլ նաեւ այն մեծածաւալ գրական վաստակը, որ էս վաղ պատանեկան տարիքից սկսում է անցնելով ութ տասնեակ տարիների կեանքի բովից, մինչեւ հասնելով այս պատկառելի տարիքին, այսպէս նա մեզ արժեքաւոր գրականութիւն է պարգեւում արժանանալով գոյգ վեհափառ-կաթողիկոսների կոնդակներին, մրցանակների եւ պատուոյ գրութիւնների ու պարգեւների:

Երկրի վրայ ֆիզիկական կեանքը յաւերժական չէ, մնացուելու եւ չիշատակողը մարդուս արած գործն է, արժեքաւոր ծառայութիւն հայրենիքին, հայութեան, ազգութեան, մշակոյթին եւ մարդկութեան: Նահապետը վաղ տարիքից ակնաջալուր եւ հաւատարիմ պայպենական աւանդուն իր վաստակով արժեւորեց կեանքը պատկառելի տարիքում հրաժեշտ տալով կեանքին:

Նահապետի թաղման-յու-



դարկաւարութեան Կալիֆորնիայի Հայ Գրողների Միութեան կողմից յանձնարարուել էր նուաստիս ցաւակցական գրութիւնով ներկայանալ: Գրութիւնը որոշ վերատեսութեան ենթարկելով նաեւ ներկայացուեց մահուանից իննը տարի յետոյ:

Մարդ-հակի կեանքի ուղին իմաստաւորում եւ արժեւորում է կատարած գործով՝ ծառայութեամբ, մտքի թռիչքներով եւ փայլատակումներով, այսպիսով կեանքը ծաղկում եւ գեղեցկանում է:

Իւրաքանչիւր անհատ առաջնորդում է իր ներքին ձայնին հաւատարիմ ձգտումներով, շնորհքներով եւ ձիրքերով, այսինքն անհատը մերում է այն ասպարէզի հետ, որն իր սրտից ու հոգուց է խօսում՝ ողջ էութեան հետ շաղախուած:

Մեր անմոռանալի Անդրանիկ Սարեանի՝ Նահապետի կեանքի ուղին հայոց գիրն ու գրականութիւնն էր, որին հաւատարիմ կեանք պարեց եւ ստեղծագործեց: Նա իր բազմաթանր գրականութեամբ ակնառու ներդրում ունեցաւ սփիւռքահայ գրականութեան անդամատանում:

Վաստակաւոր գրողը եւ բանասէրը իր մահկանացուն կնքեց 2012 թուին. Մարտ ամսում պատկառելի տարիքում հայոց գրականութեան գանձանակում ներդրելով իրեն վերապահուած բաժին ոսկելուման:

Նա ծնուել էր Իրանի Չարմահալ գաւառում 1914 թուի ապրիլ 15-ին: Նա իր ուսումն ստացել էր Հնդկաստանի Կալկաթա քաղաքի Հայոց Մարդասիրական ձեմարանում: 1935-ին վերադառնալով Իրան աշխատանքի է անցնում նաւթարդիւնաբերութեան մէջ եւ այնտեղից հանգստի է կոչուում 1968-ին:

2000 թուի, յունւար 9-ին Լոս Անջելէսի Իրանահայ Միութեան կազմակերպութեամբ մեծ շուքով տօնուում է Անդրանիկ Սարեանի ծննդեան 85 ամեակը եւ գրական գործունէութեան 65 ամեակը: Բազմաթիւ ուղերձներ են առաքուած՝ երկու վեհափառ-կաթողիկոսներ եւ մեծաթիւ հանրածանօթ մտաւորականներ, գրողներ եւ հասարակական գործիչներ ողջունում եւ գնահատում են մեծարեալի գրականութեան բնագաւառում իր ներդրած գնահատելի վաստակն, այս առիթով հրատարակուել է գրքոյկ:

Նրա կեանքը անցնում է Իրանի Խուզաստան նահանգում, ուր նաւթային ընկերութեան պաշտօնեայ էր, ապա Թեհրան մայրաքաղաքում, այնուհետեւ Ամերիկա

Գրախօսական Ծակատագրի Սեւ Կատուն Զեղինակ Յակոբ Միքայէլեան

ԳԵՈՐԳ ՔԵՕՇԿԵՐԵԱՆ

Հայկահայ ծանօթ մտաւորական, գիրքերու հեղինակ եւ վաստակաշատ կրթական մշակ Յակոբ Միքայէլեանի «Ծակատագրի Սեւ Կատուն» իրական կեանքէ առնուած՝ 121 էջերու մէջ պարբախուած հետաքրքրական վիպակ մըն է, հրատարակուած Երեւան՝ 2020 թուականին:

Յակոբ Միքայէլեան այժմ կը բնակի Երեւան, ուր հաստատուած են նաեւ իր երկու դուստրերը՝ Նուշիկ եւ Նանոր, իրենց ընտանիքներով: Ան փեսան է ծանօթ հրապարակախօս-հրապարագիր Տոքթ. Թորոս Թորանեանի:

Յակոբ Միքայէլեան անդամ է Հայաստանի Գրողներու Միութեան եւ Սուրբահայ Գրողներու Համախմբումին:


Իսկ ի՞նչ է կապ Յակոբ Միքայէլեանի հետ: Ան իր երկրորդական ուսումը ստացած է Հայկաի ՀԲԸ Միութեան Լ. Նաճարեան - Գ. Կիւլալէնկեան երկրորդական վարժարանը, իսկ ես՝ Ամերիկեան Հայկալ Գոլենը: Սակայն մենք իրարու ծանօթացանք եւ բարեկամացանք ՀԲԸ Միութեան Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան ակումբին մէջ:

«Ծակատագրի Սեւ Կատուն» կը գրէ Միքայէլեան, հետեւողութեամբ է Փիթըր Պալքեանի «Ծակատագրի Սեւ Շունը» գիրքի խորագրին, հետեւեալ պատճառաբանութեամբ: Ան երբ 2013 թուականի՝ Երեքշաբթի, Մայիս 21-ին կը պատրաստուէր Հայկաի երթալու Պէյրութ, հագիւ տունէն ելած՝ սեւ կատու մը կ'անցնի առջեւէն:

Թէեւ նախապաշարունակներու չէր հաւատար՝ կը շարունակէ Միքայէլեան, սակայն Երեքշաբթի օրն ու սեւ կատուն կը ցնցեն իր ներսիդին եւ իր վախերը կ'իրականանան երբ ան կ'արեւանգուի եւ հինգ երկար օրեր կը տառապի՝ բանտարկութեան մէջ, մինչեւ որ մեծագումար փրկագինով մը ազատ կ'արձակուի:

Պատմութիւնը կը սկսի սիրային արկածախնդրութեամբ մը, որ տեղի կ'ունենայ Դամասկոսի համալսարանը ուսանած տարիներուն: Հեղինակը ընտրած է խօսիլ երրորդ դէմքով եւ բնականաբար ծածկանուններով:

Չաւէն կը սիրահարի Տալիա անունով տեղացի ուսանողուհի մը հետ, սակայն բարեբախտաբար թէ դժբախտաբար ուսումնական տար-



ուան վերջաւորութեան վրայ կը հասնի 1967-ի արաբ-իսրայէլեան պատերազմը եւ մէջ մըն ալ գիրարը չեն տեսներ:

Հեղինակը ապա մանրամասնօրէն եւ ճշգրտօրէն կը նկարագրէ յունիսեան վեցօրեայ պատերազմը, որ կ'աւարտի արաբներուն պարտութեամբ: Յաջորդիւ, հեղինակը կը նկարագրէ 2011-ի Սուրիոյ ժողովրդային ապստամբութիւնը, որ աւելի աւեր գործեց քան թէ նախորդ պատերազմը:

Վիպակին գլխաւոր մասը հինգօրեայ առեւանգումն է՝ իր մղձաւանջներով եւ յուսատու երազներով, որուն հակիրճ կերպով ակնարկեցի քիչ առաջ: Հոս հեղինակը այնքան հարազատօրէն կը նկարագրէ իր ողիսականը, որ ընթերցողը կամայականա՛յ կ'ապրի անոր ներքին ցաւերն ու յուսահատութեան հասնող տուալտանքը:

Պատմութիւնը կը վերջանայ անակնկալ այցելուի մը՝ իր ազատագրումին համար բերած կարեւոր նպաստով: Այդ գինուորական կրթեալ սպան սակայն կ'արժարծէ անցեալին պատկանող հարց մը, որ մտատանջութեան կ'առաջնորդէ Չաւէնը՝ պատմութեան հերոսը, եւ հին սպիներ կը բանայ իր երբեմնի սիրային արկածախնդրութեան նկատմամբ:

Պէտք է ըսել որ այս վիպակը դիւրընթերցելի է եւ սահուն լեզուով գրուած, առանց բարդ բառեր գործածելու, եւ հետաքրքրական է թէ իր պատերազմներու նկարագրութիւններով եւ թէ ալ հեղինակին անձնական ապրումներով, դժուար ժամանակներու ընդմէջէն:

Վարձքը կատար եւ գրիչը դալար, սիրելի Յակոբ:

Գլենդէյ:

Նա հրապարակուել է սփիւռքեան մի շարք թերթերում: Նա իր պատմութեամբների եւ վէպերի գրքերով, հայրենասիրական ոգով, խորհուրդներով եւ յորդորներով ու բազմաթիւ գրական, գրաքննադատական եւ հասարակական յօդուածներով ակնառու աւանդ թողեց մեր սփիւռքեան կեանքում:

Նրա գրականութեան առանցքն է կազմում հայ մարդու կեանքը վերիվայրումներով, սովորութիւններով, մտածելակերպով, ձգտումներով եւ ցանկութիւններով, բարի եւ չար արարքներով, հերքում եւ խորագնումն է չար ու սոցիալ վարքերը, անցեալի հետքերով ներկայացնում է երկարաշունչ պատմութեամբ նշանաւոր բարեգործ

հայ մարդկանց մասին, սիրապատում վիպագրութիւն, Չարմահալի պատմութիւն եւ այլն:

Հաւատացած եմ, որ ոչ մի բան չի մոռացուում, շարունակ յիշատակութեան արժանի է դառնում հայրենիքին, մշակոյթին եւ ժողովրդին կատարուած ծառայութիւնը եւ նուիրուածութիւնը: Ահաւասիկ Անդրանիկ Սարեանը մէկն էր այն երախտաւորներին որ իր արժեքաւոր վաստակով ու գրականութեամբ յիշատակուելու է անմոռաց սերունդների կեանքում:

Թող որ այս մի պտղունց գրութիւնը սիրելի Նահապետ որպէս մի փունջ ծաղիկ քո լուսաւոր յիշատակին նուիրուած լինի երատագիտութեամբ:

Ծննդեան Տարեդարձին Առթիւ Շարլ Ազնաւուրի Կիսանդրիի Բացումը Փարիզի Մէջ



Աշխարհահռչակ, երգիչ, երգահան եւ շանսօնիէ Շարլ Ազնաւուրի ծննդեան 97րդ տարեդարձին առթիւ, Փարիզի Օտէնոն հրապարակի քառուղիին վրայ գետեղուած կիսանդրիի բացումը կատարուեցաւ Մայիս 22ին, իր ծննդեան տարեդարձի օրը:

Կիսանդրիի հանդիսաւոր բացման արարողութեան նախագահեց Փարիզի քաղաքապետ Անն Հիտալկոն: Սոյն հանդիսութեան անձամբ ներկայ էին նաեւ Ազնաւուրի ընտանիքի անդամները, Հայաստանի Հանրապետութեան դեսպանուհի Յասմիկ Թովմաճեանը, քաղաքապետութեան խորհուրդի անդամներ, ինչպէս նաեւ հայաբնակ շրջաններէն հայեր Ալֆրովիլէն, Իսի Լը Մոլիւնայէն, Մարսէլէն եւ Լիոնէն: Այս առթիւ ոգեկոշական ելոյթներով հանդէս եկան քաղաքապետուհի Անն Հիտալկոն եւ Նիքոլաս Ազնաւուր, պանծացնելով 1200 երգերու հեղինակ եւ մեծ ներդրումներու ուսմանը Ազնաւուրի վաստակը:

Նշենք նաեւ որ վերոյիշեալ քանդակը իրագործուած է արուեստագիտուհի Ալիս Միլիգեանի: Ան իր այս գործը նուիրած էր Շարլ Ազնաւուրին, 1964 թուականին Հայաստան կատարած իր անդրանիկ այցելութեան ընթացքին: Այս առ-

թիւ Նիքոլաս Ազնաւուր ըսաւ. «...տարիներ շարունակ գայն պահած ենք խնամքով մեր տան մէջ: Բայց ասկէ ետք անիկա կը պատկանի բոլոր փարիզցիներուն ու այս քաղաքի հիւրերուն: Յոյս ունինք որ այս կերպով կ'օգնենք պահպանելու հաւաքական յիշողութիւնն ու անոր մշակութային ժառանգութիւնը»:

Քաղաքապետ Անն Հիտալկո իր սրտի խօսքին մէջ նշեց հետեւեալը. «Շարլ Ազնաւուր ու Փարիզի իրարու յաւերժ սիրահարած են: Ասիկա իսկապէս մեծ սիրոյ գեղեցիկ պատմութիւն մըն է: Մայրաքաղաքին հանդէպ իր սէրը Շարլ Ազնաւուր արտայայտած է անմոռանալի երգերով «Կը սիրեմ քաղաքը Մայիսին», «Ես տեսայ քաղաքը» եւ ի հարկէ «Լա Պոնէմը»: Բազմաթիւ այլ գործեր ալ, որոնք անոր սէրն ու հիացումը կ'արտայայտեն Փարիզի հանդէպ: Ակնյայտ է որ քաղաքի հանդէպ իր այս սէրը փոխադարձ էր: Ազնաւուրի երաժշտութիւնը միշտ կ'ապրի փարիզցիներու սիրտին մէջ» յայտարարեց Հիտալկո:

Ազնաւուր մահացած էր 1 Հոկտեմբեր 2018ին, 94 տարեկան հասակին մէջ:

«Մարմարա»

Ազնաւուրի Կիսանդրին Արցախի Մէջ



Ստեփանակերտ, Մայիս 22, «Արմէնփրէս» եւ «Արցախփրէս» մամուլի գործակալութիւններէն կ'իմանանք թէ յատուկ հանդիսութեամբ մը Մայիսի 22ին Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի հայաֆրանսական բարեկամութեան պուրակին մէջ բացումը կատարուած է աշխարհահռչակ երգիչ եւ երգահան Շարլ Ազնաւուրի կիսանդրին, որ կը գտնուի Շարլ Ազնաւուրի

անուան մշակութային կեդրոնի հարեւանութեամբ:

Սոյն միջոցառումի բացումը կատարած են քանդակագործ եւ կիսանդրիի հեղինակ Եուրի Յովհաննիսեանն ու Շարլ Ազնաւուր Մշակութային կեդրոնի տնօրէն Արմէն Յովսէփեան: Ան իր ելոյթին մէջ բարձր գնահատած է ներդրումը առասպելական երգիչի համաշխարհային մշակութային կեանքին

Վախճանած Է Հայ Կաթողիկէ Պատրիարքը

Շարունակուած էջ 1-էն

ուանուի տնօրէն Պուրճ Համուտի Մեսրոպեան Հայ Կաթողիկէ վարժարանին, գոր կը վարէ 9 տարի:

1969-ին՝ կ'ընտրուի Ընդհանուր Մատակարար Չմմառու Պատրիարքական կղերի միաբանութեան:

1977-ի Յունուար 3-ին՝ Պօղոս Զ. Սրբազան Պապը գինք կ'անուանէ տիտղոսաւոր Եպիսկոպոս Ամիտայի (Տիարաքեքի) Հայոց եւ Առաքելական Եկզարք Ֆրանսաբնակ Հայ Կաթողիկէ հաւատացեալներուն:

Եպիսկոպոս կ'օծուի 1977-ի Փետրուար 13-ին, Պուրճ Համուտի Սուրբ Փրկիչ եկեղեցու մէջ:

1986-ի Յունիս 20-ին, Յովհաննէս Պօղոս Բ. Սրբազան Պապը կը ստեղծէ Փարիզի Սուրբ Խաչ Թեմը, Ֆրանսայի հայ կաթողիկէներուն համար եւ գինք կ'անուանէ առաջին եպիսկոպոսը այդ Թեմին:

1988-ի Հոկտեմբեր 15-ին կը նշանակուի Առաքելական այցելու Արեւմտեան Եւրոպայի Հայոց, որոնք գուրկ են տեղական Առաջնորդէ:

1997-ին կ'աւարտէ «Քրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցու» արեւմտահայերէն թարգմանութեան հրատարակութիւնը, որուն թարգմանութիւնն ու սպազարութիւնը վարած էր:

2005-ին եւ 2009-ին, ան կը կազմակերպէ Հռոմի եւ Լիբանանի մէջ, այժմ Ընդհանրական Եկեղեցու վարդապետ՝ սուրբ Գրիգոր Նարեկացիին նուիրուած երկու գիտաժողովներ, որոնց ակդաներուն հրատարակութիւններն ալ կը հոգայ:

1997-էն 2014 վարած է Հռոմի Քահանայապետական Լեւոնեան Հայ վարժարանի ընդհանուր մատակարարի պաշտօնը:

7 Ապրիլ 2013-ին, երբ կը հաստատուի իր յաջորդը՝ Արհի. Հայր Յովհաննէս Եպիսկոպոս Թէյրուզեան, որպէս Թեմին Առաջնորդ, ան կը դառնայ վաստակաւոր եպիսկոպոս Ֆրանսայի Թեմին, որուն ծառայած էր որպէս Առաջնորդ 36 տարիներ շարունակ:

2015-ի Յունիս 25-ին յետ մահու երջանկայիշատակ Ներսէս Պետրոս ԺԹ. Պատրիարքին, եւ ըստ Արեւելեան Եկեղեցիներու կանոնադրին ան, որպէս մնացուն Սիւնհոգոսի կարգերէց եպիսկոպոս դարձաւ Պատրիարքական Կառավարիչ Հայ Կաթողիկէ Եկեղեցու:

2015-ի Յունիս 25-ին Հայ Կաթողիկէ Պատրիարքական Եկեղեցու Սիւնհոգոսական Հայրերը գինք կ'ընտրեն 20-րդ Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց եւ ան կ'առնէ Գրիգոր Պետրոս Ի. անունը:

Եւրոպական Խորհրդարանը Կոչ Ըրած Է

Շարունակուած էջ 1-էն

ձեւը ողջ պատմութեան ընթացքին: Բանաձեւը արձանագրած է, որ Անգարայի հետ յարաբերութիւնները բարելաւուելու փոխարէն վատթարացած են, եւ խիստ քննադատութեան ենթարկած է Թուրքիոյ նախագահ՝ Ռէճէպ Էրտողանին՝ Եւրոպական միութեան ու անդամ երկիրներու հանդէպ սադրանքներու դիմելու եւ Թուրքիան Եւրոպական չափանիշներէն հեռացնելու համար:

Բանաձեւը Եւրոպական յանձնաժողովին կոչ ըրած է պաշտօնապէս սառեցնել Եւրոպական միութեան Թուրքիոյ անդամակցութեան բանակցութիւնները:

Բանաձեւի ընդունուելուն անմիջապէս յաջորդած է Թուրքիոյ արտաքին քաղաքական գերատեսչութեան արձագանգը:

«Նման բանաձեւի ընդունիլը այն ժամանակ, երբ ջանքեր կը գործադրուին վերականգնելու Թուրքիոյ եւ Եւրոպական միութեան միջեւ յարաբերութիւնները՝ Եւրոպական միութեան Թուրքիոյ

անդամակցութեան հեռանկարներու հիման վրայ եւ դրական օրակարգի շրջանակներէն ներս, անընդունելի է», - յայտարարած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը:

Անգարան յայտարարած է, թէ չ'ընդունիր այդ «կողմնակալ ընդհանրութիւնը, ուր ընդգրկուած են ոչ միայն սուտ պնդումներ Թուրքիոյ մարդու իրաւունքներու, ժողովրդավարութեան, օրէնքի գերակայութեան, պետական համակարգի եւ քաղաքական կուսակցութիւններու մասին, այլ նաեւ Թուրքիոյ արտաքին քաղաքականութիւնը դիտարկուած է որպէս սպառնալիք»:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան գնահատմամբ՝ փաստաթուղթը «կ'արտայայտէ Յունաստանի եւ կիպրոսցի յոյներու բացարձակ անարդար եւ կողմնակալ պնդումները էկէեան ծովի, Արեւելեան Միջերկրականի ու Կիպրոսի հարցով, ինչպէս նաեւ կը պաշտպանէ հայերու միակողմանի պահանջները 1915 թուականի իրադարձութիւններու հետ կապուած»:

Եւ հայ ժողովուրդին: Իր հերթին խօսք առնելով ճարտարապետ Մամիկոն Ֆարսեան նշած է որ բացառիկ օր մըն է որ կ'ապրի այսօր,

քանի որ իրականացած է իր եւ շատ մը ուրիշներու երազը վերջապէս Արցախի մէջ տեսնելով Շարլ Ազնաւուրի կիսանդրին:

ՎԱՐՁՈՒ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ

Eagle Rock-ի մէջ վարձու է 3 unit-անոց security շէնքի մէջ 2 սենեակ 1 բաղնիք բնակարան մը լաւ շրջանի մէջ: Ամբողջութեամբ վերանորոգուած, central AC/H, carport: Section 8 ok:

Հեռաձայնել Սառայիմ՝ (626) 646-3660:

Փաստփնայի մէջ վարձու է բնակարան մը 2 սենեակ 1 բաղնիք:

Հեռաձայնել Սառայիմ՝ (626) 646-3660:

Ատրպեյճանը Սահմանին եւ Խորը Թիկունքում

Շարունակուած էջ 2-էն

կան անվտանգութեան, անշուշտ, հնարաւոր չէ: Բայց, երբ երկրի առաջին դէմքի մակարդակով յայտարարուած է քաղաքական դաշտում թշնամի կամ հակառակորդ երկրի տեղեկատուական գործակալները առկայութեան մասին, դանշանակում է, որ ինդիւրը հասել է ազգային անվտանգութեան բաւականին բարձր աստիճանի եւ պահանջում է լուծումներ: Հակառակ դէպքում ստացուած է, որ այդ մասին յայտարարութիւններն էլ իրենց հերթին են մանիպուլիատիւ: Որեւէ սկզբունքային տարբերութիւն չկայ՝ թշնամու գիտութիւն է հատել սահմանն ու խորացել 3 կմ, թէ թշնամու տեղեկատուական գործակալներն են յայտնուել խորը թիկունքում, ընդ որում՝ այդ բանի անգամ ոչ թէ կամ ոչ միայն

անձնական, այլ երեւութական իմաստով: Եւ, եթէ սահմանային հարցերը կարող են լուծուել եռակողմ կամ բազմակողմ քննարկումներով, Ատրպեյճանի վրայ միջազգային ճնշման ուժգնացման միջոցով, առաւելագոյնս խուսափելով Հայաստանի համար այդքան անցանկալի ռազմական նոր էսկալացիա վտանգից, ապա թիկունքում յայտնուած «տեղեկատուական գործակալներ» երեւոյթի ինդիւրը պետութեան առաջին դէմքի մակարդակով բարձրաձայնելու դէպքում պետութիւնն ինքն էլ պէտք է լուծի, ապահովելով Հայաստանի տեղեկատուական անվտանգութիւնն առնուազն այնպիսի աստիճանի վրայ, որ չլինի վարչապետի մակարդակով այդպիսի բարձրաձայնումների անհրաժեշտութիւն:

«ԵՐԵՒԱՆ ԼՈՒՐ» Կայքէջ

Նոր Սարդարապատի Հրամայականը

Շարունակուած էջ 6-էն

յետնորդներ նախորդ «խենթեր»-ուն, իրենց անօրինակ սիրանքներով կրկնեցին 1918-ի դիւցազնամարտին յաղթանակը: Նոյն շաբաթից հերթական դրուագն էր ան. նոյն դողանջին արձագանգը: Այս անգամ այդ յաղթերը լսուեցաւ Հայաստանի արեւելքէն:

Վերջին պատերազմը իր անյաջող էլքով կը նմանի 1918-ի նախօրէին պատահած ողբերգութեան: Ծանր հարուածը պիտի չըլլայ զգեստնիչ ու վերջնական: Այդպէս թուեցաւ 1915-ին եւս, բայց «խենթերը» սպիացուցին վերջը, դարմանեցին վիրշտը: Գորշ մայրամուտին յաջորդեց պայծառ արեւածագը: Ո՞վ կրնայ համոզել, թէ վերջնական է ամէն կորուստ ու անկում: Պատմութեան մէջ չկայ նման բան: Այլ՝ կայ հաւատք վերածնունդի, յոյս ուժերու համախմբումին եւ սերունդներու խենթեակարի ուճացումին: Յուսալքիչ պահը չի կրնար չուահատութեան նախադուռը հանդիսանալ: Աւելի ասեղ օրեր է ետք վերածնած հայը իր մէջ վստահաբար ունի արիւնն ու աւիւնը վերստին գարթ-

նելու, կորովը լիցքաւորելու եւ նոր էլքեր գտնելու: Թօթափել է պէտք վախի, ընկրկումի, յուսաբեկութեան ծանրածանր հոգեվիճակը: Այո, կը կարօտի ժամանակի, սակայն անհնար չէ նման հոգեվիճակ: Ահա շուտով հասակ կը նետեն նոր մարտիկները հայոց, նոր «խենթերը» հայկական:

Կը մնայ պատրաստուել նոր Սարդարապատներու համար: Սահմանագային հրամայական է: Պատերազմը, թերեւս խթան մըն էր զգաստանալու, որ նոր Սարդարապատներ կրնան գրաւականները ըլլալ սերունդներու դաստիարակութեան: Այսինքն՝ դողանջէ աւելի ասագանգ է որ կը լսենք այսօր: Ահագանգ՝ նոր Սարդարապատներու: Երէկ ան արեւմուտքին էր, այսօր արեւելքին, բայց միշտ նոյն սպառնալից եաթաղանով:

Սարդարապատի հերոսամարտի յաղթանակին այս փառահեղ օրուան առիթով, մեր խոստումը պիտի ըլլայ՝ ոտքի՛, նոր Սարդարապատներու տեսիլքով: Սա արդէն կարգախօս չէ, այլ՝ հրամայական...:

ԼԻԲԱՆԱՆ

Նախագահ Պայտրնի Օրով

Շարունակուած էջ 11-էն

տեղի ունենալիք նախագահական ընտրութիւններէն առաջ կարողանայ բարելաւել երկրի տնտեսութիւնը, իսկ թուրքիան այդ նպատակին չի կրնար հասնիլ, եթէ շարունակէ Ամերիկային հետ առճակատման քաղաքականութիւն վարել:

Իսկ ինչ կը վերաբերի յարաբերութիւններու բարելաւման, ըստ երեւոյթին, էրտողանի այս ռազմաշունչ յայտարարութիւնները, որոնք սկսան մի քանի տարի առաջ եւ կը շարունակուին այսօր եւ նաեւ այս մի քանի օրուայ ընթացքին՝ Իսրայէլ-Կազա գիւղութեան գործողութիւններու ընթացքին, մեծ վրդովմունք առա-

ջացուցած են ամերիկեան քաղաքական շրջանակներու մօտ, որոնք այսօր արդէն կը դատապարտեն նախագահ էրտողանի յայտարարութիւնները եւ կ'ամբաստանեն զինք, որ կրակին վրայ իւր կը թափէ, փոխանակ փորձէ մեղմել իրավիճակը: Ուրեմն, առաջմ հորիզոնին վրայ չեբեւիր, որ Ամերիկա-Թուրքիա յարաբերութիւնները մօտիկ ապագային կրնան բարելաւուիլ, այդ ալ անշուշտ կը բխի մեր շահերէն, որ թուրքիա մեկուսացուի Արեւմուտքի կողմէ եւ Արեւմտեան երկիրներ նաեւ Հայաստանը նկատեն այդ ընդհանուր դաշտին վրայ կարեւոր խաղացողներէն մին, որուն միջոցաւ կրնան նաեւ թուրքիոյ հետ իրենց «հաշիւները մաքրել»:

Սովետական Քարտէզի ու Իրական Պատկերի Տարբերութիւնները

Շարունակուած էջ 12-էն

մնացած հայկական միակ անկլաւր Արծուաշէնն է:

Այսպիսով, Վերին Ոսկեպարի նախկին անկլաւի մակերեսը, ըստ Google-ի քարտէզի, մօտ 25գ4 քկմ է, Բարիսուղարլուինը՝ 10գ1 քկմ, իսկ Տիգրանաշէնինը՝ 8գ3 քկմ: Այդ երեք նախկին ատրպեյճանական անկլաւների գումարային մակերեսը մօտ 43գ8 քկմ է:



Ատրպեյճանում մնացած եւ 1992 թուականին հայաթափուած Արծուաշէնի մակերեսը մօտ 38գ1 քառակուսի քիլոմէթր է:

Տաւուշի Սահմանները

Տաւուշի մարզում շատ քիչ են հատուածները, որտեղ փաստացի հայկական կողմի հսկողութեան տակ գտնուող տարածքները համընկնում են սովետական հանրապետութիւնների (եւ Google-ի քարտէզի) սահմանի հետ: Ընդ որում, բաւանսը Ատրպեյճանի օգտին է:

Հայաստանի Զինուած ուժերի դիրքերը սահմանից առաջ են միայն Բերդաւանի մօտ (մօտ 1.6 քկմ), Ոսկեպար-Կիրանց հատուածում (մօտ 6.7 քկմ), Բերքաբերից արեւելք (մօտ 1.6 քկմ) եւ Ներքին Կարմիրաղբերից հիւսիս (մօտ 0.8 քկմ): Այնինչ, հայկական բանակի դիրքերը հետ են նախկին սահմանից Բերդաւանից հիւսիս ընկած հատուածում (մօտ 5.1 քկմ), Դովեղից արեւելքում (մօտ 2.4 քկմ), Բարեկամաւանի մօտ (մօտ 6.2 քկմ), Կոթիի յարակից հատուածներում (մօտ 11.4 քկմ), Բերքաբերից հիւսիս (մօտ 7.2 քկմ), Սեւար-Կանան-Վազաշէն գծի երկայնքով (մօտ 14.8 քկմ), Պառաւաքարի յարակից հատուածում (մօտ 13.2 քկմ), Ներքին Կարմիրաղբեր-Այգեպար-Մովսէս-Զինարի գծի երկայնքով (մօտ 14գ3 քկմ) եւ Այգեձորից դէպի հարաւ (մօտ 35.7 քկմ):

Այսպիսով, գումարային առումով, Տաւուշի մարզում Հայաստանի Զինուած ուժերը հսկում են նախկին Սովետական Ատրպեյճանի տարածքից մօտ 10գ7 քկմ տարածք, փոխարէնը նախկին սովետական հանրապետութիւնների սահմանից հայկական բանակի դիրքերը հետ են մօտ 110.4 քկմ:

Այդ մօտ 110 քառակուսի քիլոմէթրի մի մասը հսկում է նախկին սովետական հանրապետութիւնների սահմանն անցած ատրպեյճանական բանակի կողմից, իսկ մի մասը չէզոք գօտի է, որն ընկած է հայկական ու ատրպեյճանական դիրքերի արանքում:

Արդիւնքում

Այսպիսով, Հայաստանի Զինուած ուժերի կողմից հսկում է

նախկին Սովետական Ատրպեյճանի մօտ 60.5 քկմ տարածք, որի մեծ մասը՝ 43.8 քկմ-ն, նախկին անկլաւներն են (մնացածը՝ Տաւուշի եւ Վալոյց Զորի մարզերում): Փոխարէնը, Հայաստանի Զինուած ուժերի դիրքերը հետ են նախկին սովետական հանրապետութիւնների սահմանից մօտ 148.5 քկմ-ով, որի միայն փոքր մասն է Արծուաշէնը (մնացած՝ Տաւուշի մարզում):

Դժուար է ասել, թէ ինչպէս կ'իրականացուի սահմանազատումը, եթէ այն ընդհանրապէս իրականացուի: Բայց դրա սահմաններում յտակ հիմքեր կան անկլաւների փոխանակման շուրջ պայմանաւորուելու, ինչպէս նաեւ Բերքաբերի, Վազաշէնի, Պառաւաքարի, Ներքին Կարմիրաղբերի, Այգեպարի, Մովսէսի, Զինարիի ու Այգեձորի 70-100 քկմ մակերեսով հողերն Ատրպեյճանից պահանջելու կամ դրանք ատրպեյճանական հսկողութեան տակ գտնուող այլ տարածքներով փոխանակելու համար:

Ամէն դէպքում փաստենք, որ Տաւուշի եւ Վալոյց ձորի մարզերում հայկական բանակի դիրքերի ու նախկին սովետական հանրապետութիւնների սահմանների անհամապատասխանութեան, ինչպէս նաեւ նախկին անկլաւների դէֆակտօ վերացման արդիւնքում Հայաստանի կողմից փաստացի հսկում է մօտ 88 քառակուսի քիլոմետրով աւելի քիչ տարածք, քան նախատեսված է սովետական հանրապետութիւնների հաստատուած քարտէզով:

Եւս մէկ անգամ չաւելենք, որ հաշուարկը մօտաւոր է, եւ դրա մէջ ներառուած չեն Սիւնիքի ու Գեղարքունիքի մարզերում ատրպեյճանական բանակի՝ Մայիսի 12-ից սկսուած «անկրակոց» առաջխաղացումները:

ԿԱՐՁՈՒ ՄՐԱՆ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104 (626) 797-7680

Մատրիտի «Աթլետիկոն»՝ Սպանիոյի ֆուտպոլի Ախոյեան



Մատրիտի «Աթլետիկոն» 11րդ անգամ ըլլալով նուաճեց Սպանիոյ Ախոյեանի տիտղոսը:

Վերջին հանգրուանին արժենթինացի Տիեկո Սիմէոնէի գլխաւորած խումբը հիւրընկալուեցաւ «Վալյատոլիտի» կողմէ եւ յաղթանակի հասաւ 2:1 արդիւնքով: Յաղթանակի կողը նշանակեց անցած ամրան «Պարսելոնայէն» «Աթլետիքո» տեղափոխուած ուրուգուացի յարձակող Լուիս Սուարեսը:

«Աթլետիկոն» շահեցաւ 86 միաւոր եւ 2 միաւոր առաջ անցաւ երկրորդ տեղը գրաւած Մատրիտի «Ռեալէն», որ վերջին օրը 2:1 արդիւնքով յաղթեց «Վիլյաուեալին»: Արքայական խումբի կազմէն աչքառու էր ֆրանսացի յարձակող Քարիմ Պենզեման եւ խորուած կիսապաշտպան Լուկա Մորերիչը:

Նախորդ անգամ Տիեկո Սիմէոնէի գլխաւորած խումբը Սպանիոյ ախոյեան դարձած էր 2014 թուականին:

Երրորդ տեղը 79 կէտով գրաւեց «Պարսելոնան», որ վերջին հանգրուանին նուազագոյն հաշիւով յաղթեց «Էյպարին»:

«Լիլ» 10 Տարի Անց Ֆրանսայի Ախոյեան Է



Ֆրանսայի ֆուտպոլի առաջնութեան 2020/21 մրցաշրջանի ախոյեան դարձաւ «Լիլը»:

Ֆրանսական Լիկա 1-ի վերջին՝ 38-րդ հանգրուանին «Լիլ» մրցեցաւ «Անժէի» հետ եւ յաղթեց 2:1 արդիւնքով:

Վերջին օրը ՊՍԺ եւս յաղթանակ տօնեց՝ պարտութեան մատնելով «Պրենստին» 0:2 արդիւնքով:

«Լիլ» պատմութեան մէջ 4-րդ անգամ է որ կը նուաճէ այս տիտղոսը: ՊՍԺ գրաւեց երկրորդն դիրքը, իսկ եռեակը կ'եզրափակէ «Մոնպրեն»:

Միխթարեանի Կոլը Օգնեց «Ռոմային»

Իտալիոյ ֆուտպոլի առաջնութեան ընթացիկ մրցաշրջանի վերջին օրը «Ռոման» մրցեցաւ «Սպեցիայի» հետ:

«Առաջին խաղակէսը աւարտեցաւ «Սպեցիայի» առաւելութեամբ՝ 2:0 արդիւնքով: «Ռոման» չափողուեցաւ երկրորդ կէսին խուսափել պարտութենէն: Նախ 52-րդ վայրկեանին հաշուի տարբերութիւնը կրճատեց Ստեֆան էլ Շարաւին, այնուհետեւ՝ 85-րդ վայրկեանին կիսապաշտպան Հենրիխ Միխթարեանը «Ռոմային» փրկեց պարտութենէ: «Սպեցիա»-«Ռոմա»՝ 2:2:

Միխթարեան «Ռոմայի» կազմին մէջ մասնակցեցաւ 34 հանդիպման, դարձաւ 13 կոլի եւ 11 արդիւնաւետ փոխանցման հեղինակ:

«Ռոման» մրցաշարային աղիւսակին վրայ գրաւեց 7-րդ տեղը:

ՖիՖԱ-ն Կը Քննարկեն Աշխարհի Բաժակը Երկու Տարին Անգամ Մը Կայացնելու Առաջարկը

Ֆուտպոլի միջազգային Ընկերութիւնը՝ ՖիՖԱ-ն Կը քննարկեն Աշխարհի Բաժակը ոչ թէ 4, այլ 2 տարին անգամ մը կայացնելու առաջարկը:

Յենրիխ Միխթարեանի Համար Անակնկալ Եղած Է Հայաստանի Հաւաքականէն Հրաւիր Չստանալը

Ֆուտպոլի Հայաստանի հաւաքականի եւ իտալական «Ռոմայի» կիսապաշտպան Հենրիխ Միխթարեանի համար անակնկալ եղած է սպանացի գլխաւոր մարզիչ խոսկին Կապաուսի գլխաւորած ազգային խումբէն հրաւիր չստանալը խորուած թիայի եւ Շուէտի հաւաքականներու հետ յառաջիկայ ընկերական խաղերուն: Այդ մասին Միխթարեանը կը յայտնէ իր ֆեյսպուքի էջին մէջ:



«Ի գարմանս ինձ, Հայաստանի ազգային հաւաքականի մարզչական շտաբից տեղեկացուեցի, որ ինչ-ինչ պատճառներով հրաւիրուած չեմ առաջիկայ ընկերական խաղերին: Պաշտօնական հիմնաւորումներն ինձ համար համոզիչ չեն: Այնուամենայնիւ, ես կանգնած եմ մեր տղաների կողքին եւ լաւագոյնն եմ մաղթում առաջիկայ խաղերում», - գրած է Միխթարեանը:

Յիշեցնենք, որ Հայաստանի ազգային հաւաքականը Յունիսին պիտի ունենայ 2 ընկերական հանդիպում: Յունիսի 1-ին՝ պիտի կայանայ խորուած թիա - Հայաստան, իսկ Յունիսի 5-ին՝ Սթոքհոլմի Շուէտ - Հայաստան ընկերական հանդիպումը:

«Չելսին» Ու «Լիվերփուլ» Նուաճեցին Ախոյաններու Լիկայի Ուղեգիր

Premier League standings													
MATCHES		NEWS		STANDINGS		STATS		PLAYERS					
Season 2020-21													
Club	MP	W	D	L	GF	GA	GD	Pts	Last 5				
1 Man City	38	27	5	6	83	32	51	86	✓	✗	✓	✓	✓
2 Man United	38	21	11	6	73	44	29	74	✓	✗	✗	✗	✓
3 Liverpool	38	20	9	9	68	42	26	69	✓	✓	✓	✓	✓
4 Chelsea	38	19	10	9	58	36	22	67	✗	✓	✗	✓	✓
5 Leicester City	38	20	6	12	68	50	18	66	✗	✗	✓	✗	✗

Աւարտեցաւ անգլիական Փրեմիեր Լիկայի հերթական մրցաշրջանը, ուր ախոյեանի կոչումը ժամանակէն շուտ ապահոված էր «Մանչեսթըր Սիթին»:

Վերջին հանգրուանին Լոնտոնի «Չելսին» հիւրընկալուելով 1:2 արդիւնքով անակնկալ պարտութիւն կրեց «Ասթոն Վիլյալէն», բայց 67 միաւորով գրաւեց չորրորդ տեղը եւ նուաճեց Եւրոպային Ախոյեաններու Լիկայի ուղեգիր:

«Լիվերփուլ» սենեկալցի յարձակող Սադիո Մանէի նշանակեց երկու կողերուն շնորհիւ 2:0 արդիւնքով յաղթանակ տարաւ «Քրիսթալ Փելասի» նկատմամբ եւ 69 կէտով բարձրանալով երրորդ տեղը՝ ան եւս նուաճելով Ախոյեաններու Լիգայի ուղեգիր:

«Մանչեսթըր Սիթին» սեփական դաշտին վրայ 5:0 արդիւնքով յաղթեց «Էյվերթոնին» եւ առաջնութիւնը աւարտեց 86 միաւորով: Երկրորդ տեղը գրաւած «Մանչեսթըր Եունայթըդ» հիւրընկալուելով 2:1 արդիւնքով յաղթեց «Վուլվերհեմթընին» եւ հաւաքեց 74 միաւոր:

«Չելսիի» սայթաքումէն չօգտուեցաւ «Լեսթերը», որ սեփական դաշտին վրայ 2:4 արդիւնքով պարտուեցաւ «Թոթենհեմէն» եւ գրաւեց 5-րդ տեղը: «Լեսթերն» 6-րդ դասուելով իրաւունք ձեռք ձգեց մասնակցելու Եւրոպայի Լիգայի խմբային փուլին:

Լոնտոնի «Արսենալը» 61 միաւորով գրաւեց 8-րդ տեղը եւ 26 տարուայ մէջ առաջին անգամ չկարողացաւ նուաճել Եւրոպական գաւաթներէն որեւէ մէկուն մասնակցելու ուղեգիր:

Պրեմիեր Լիկային դուրս մնացին «Ֆուլհեմ», «Ուեստ Պրոմփրիչ» ու «Շեֆիլտ Եունայթըդ» ակումբները:

Անգլիոյ առաջնութեան լաւագոյն ուժբարկու դարձաւ Լոնտոնի «Թոթենհեմի» անգլիացի յարձակող Հարի Քեյնը, որ նշանակեց 23 կոլ: Անկէ մէկ կոլ ետ մնաց «Լիվերփուլի» եգիպտացի յարձակող Մոհամետ Սալահը, իսկ «Մանչեսթըր Եունայթըդի» փորթուկալացի կիսապաշտպան Պրոուսո Ֆերնանտէշ 18 կոլով եզրափակեց լաւագոյն եռեակը:

Մէտուական Արաբիոյ ֆուտպոլի ընկերութիւնը դիմած է ՖիՖԱ-ին նման առաջարկութեամբ: Այս կերպ կը բարձրանայ աշխարհի առաջնութեան արդիականութիւնը եւ առաւել մեծ հետաքրքրութիւն կ'ըլլայ մարզաձեւի նկատմամբ: Սակայն առաջարկի ընդունման պարագային կը կրճատուի միջազգային խաղերու թիւը:

Այս պահին ՖիՖԱ-ն կը շարունակէ ուսումնասիրութիւնը: Եթէ ՖիՖԱ-ն որոշէ փոխել աշխարհի առաջնութեան ժամկէտները, ապա այն կը վերաբերի թէ տղամարդկանց, եւ թէ կանանց Բախականներուն: